Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 13 (534) հուլիս 17-31, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Անդրդվելի պայքարի պատգամ

Քանի դեռ չի մարել պայքարի ոգին ու կորովը, Հայ դատը չի կարող լինել վերացական հասկացողություն: Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին նախագահը փորձեց եւ փորձում է շարունակել նսեմացնել Հայ դատը՝ Հայ դատականներ՝ «ազգայինը կեղծ կատեգորիա» պիտակներ օգտագործելով: Դա շարունակությունն է սովետական յոթանասուն տարի շարունակ տեւած քարոզչությանը: Յոթանասուն տարիների ընթացքում խորհրդային կարգերի պայմաններում ազատ ու անկախ հայրենիք ունենալու հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ոգին երբեք չի մարել, համակողմանի քարոզչությունը չի արդյունավորվել:

Խորհրդային մամլիչի առկայության պայմաններում հայկական գաղթօջախներում Հայ Հեղափոխական Դաշնակցության անխոնջ պայքարի եւ պատմության մեջ թողած ավանդի շնորհիվ սերունդներ են դաստիարակվել ազգային գաղափարախոսությամբ եւ անկախ հայրենիքի տեսլականով: Սփյուռքյան պայմաններում ծնված եւ հայրենիքը ոչ շոշափելի գաղափարական հենքի վրա ճանաչած սերունդները չեն անտեսել պայքարի ուղին ու մինչեւ իսկ կյանքի գնով պահանջատեր եղել ազգի իրավունքների վերականգնման համար: Այս երեւույթի անառարկելի փայլուն ապացույցն է խտանում 1983թ. Լիսաբոնի գործողության մեջ:

Հինգ հայորդիներ, դաշնակցական եւ պատանեկան քուրայի մեջ թրծված մարտիկներ իրենց կյանքի գնով ապացուցեցին, որ հանուն գաղափարի կարելի է զոհաբերել ամենաթանկը:

Հինգ մարտիկների կերտած սխրանքը փարոս պետք է լինի մեր սերունդների համար: Հանուն ազգային գաղափարի կյանքը նվիրաբերելու վեհ պատգամն առհավատչյա է պայքարի հարատեւման համար: Պետք է պատկերացնել այդ օրերի իրավիճակն ու հանգամանքները սխրանքի խորությունն ըմբռնելու համար:

Ազգային ազատագրական պայքարի ոգով տոգորված Հայ հեղափոխական բանակի հինգ մարտիկների սերունդը այն օրերում է դաստիարակվել, որ դեռեւս անհնարին է եղել հայրենիքի հողի վրա պայքարելու, հողն ազատագրելու իրական հնարավորությունը:

Չկար Արցախյան պայքար: Հայրենիքը տեսանելի էր ֆիդայիների պայքարի պատմությամբ եւ այն տեսլականով ու փափագով, որ «արդյո՞ք մեզ եւս բախտ կվիճակվի կռվել հայրենիքի ազատագրության համար»: Անկախ Հայաստանի խորհրդանիշներ եռագույն դրոշն ու գերբը միայն ու միայն կանգուն էին Դաշնակցության կենտրոններում, որոնք պահվում էին սրբությամբ ու ամենայն հարգանքով՝ ճիշտ ժամանակին ու օրը հետ վերադարձնելու հայկական անկախ պետականությանը:

Այդ պայմաններում ծնվեց պահանջատիրության՝ անհիրավության դեմ զենքով պայքարի գաղափարը: 1974թ. թիրախ դարձան հաստատություններն ու դիվանագետները, այդ ձեւով միջազգային բեմերում բարձրացնելով հայ ժողովրդի կամքն ու վճռականությունը իր իրավունքներին տիրանալու ուղղությամբ:

Քառասուն տարվա հեռավորությամբ, երբ հետհայացք ենք ուղղում պայքարի այդ ոճով իրականություն դարձած շոշոփելի ձեռքբերումներին, այլընտրանք չունենք, բացի դասերի սերտելուց ու հարգանք տածելուց այդ օրերի սխրանքներ իրականացրած սերունդներին:

Այսօր կանգնած ենք հայրենիքը կորցնելու իրական վտանգի առջեւ: Մոտիկ անցյալում եւս ականատեսն ենք եղել հազարավոր հայորդիների՝ հանուն հայրենիքի անկախության ու ազատության համար պայքարի իրական դրվագների, սակայն միշտ էլ առաջամարտիկների այդ ուղղությամբ լիակատար նվիրումով ամենաթանկը զոհաբերողները դասվելու են որպես ընդօրինակելի հերոսներ:

Ահա այն խորհուրդը, որը մեզ է փոխանցվել քառասուն տարիներ առաջ եւ պիտի մեզ գոտեպնդի դիմակայելու եւ անդրդվելի լինելու համար:

Ադրբեջանական ապօրինի անցակետից ԱՀ քաղաքացի է առեւանգվել

Հուլիսի 29-ին Արցախի Հանրապետության քաղաքացի, 1955թ. ծնված Վագիֆ Խաչատրյանը բուժում ստանալու նպատակով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ տեղափոխվում էր քաղաք Երեւան, սակայն Լաչինի միջանցքում ապօրինաբար տեղադրված հսկիչ անցակետում առեւանգվել է Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից:

«Վագիֆ Խաչատրյանին եւ ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի օտարազգի ներկայացուցչին նստեցրել են «Նիվա» մակնիշի մեքենա, որն ուղեւորվել է դեպի Հակարիի կամրջի ներքեւի հատված: Մոտ 10 րոպե անց «Շեվրոլե» մակնիշի մեքենայով ԿԽՄԿ ներկայացուցիչը վերադարձել է «անցակետ», իսկ Վագիֆ Խաչատրյանը տարվել է անհայտ ուղղությամբ: Ըստ վկայության՝ ԿԽՄԿ ներկայացուցչին ադրբեջանցիները հրելով դուրս են հանել մեքենայից»,- ասվում է ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի տարածած հաղորդագրության մեջ:

Նույն օրը Ադրբեջանի գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ ադրբեջանցի ուժայինների կողմից առեւանգված Արցախի քաղաքացին ձերբակալվել է ու տեղափոխվել Բաքու: Նշվում է, որ Վ. Խաչատրյանն անցնում է «1991 թվականի դեկտեմբերի 22-ին հայկական զինված խմբավորումների անդամների կողմից ցեղասպանության, ազգությամբ ադրբեջանցիների տեղահանության, պետությանը պատկանող գույքի ոչնչացման եւ վնասման փաստերով»:

«Ադրբեջանի գլխավոր դատախազության կողմից Վագիֆ Խաչատրյանի նկատմամբ հարուցված քրեական գործն ու դրա շրջանակներում նրա՝ այսպես կոչված կալանավորումը կեղծ եւ շինծու պատրվակ է նրան առեւանգելու համար: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ձեռք բերված տեղեկություններով եւ իրականացված ուսումնասիրություններով հաստատվել է, որ Վագիֆ Խաչատրյանի նկատմամբ միջազգային հետախուզական որեւէ համակարգում առկա չէ վերջինիս հետախուզման վերաբերյալ տվյալ»,- շեշտում է ԱՀ ՄԻՊ-ը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ Վագիֆ Խաչատրյանը միջազգային մարդասիրական պաշտպանության տակ գտնվող անձ է, ով ԿԽՄԿ-ի հովանու ներքո Հայաստան էր տեղափոխվում բուժում ստանալու նպատակով: Ուստի, վերջինիս առեւանգումն Ադրբեջանի սահմանապահ ծառայողների կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում է:

ԿԽՄԿ-ն նախապես կողմերին տրամադրում է տեղափոխվող հիվանդների ցուցակները եւ միայն համաձայնեցնելուց հետո է իրականացնում նրանց տեղափոխումը: «Ադրբեջանի գլխավոր դատախազության կողմից առեւանգումից անմիջապես հետո կեղծ նարատիվներով եւ մեղադրանքներով լի հաղորդագրության տարածումը ցույց է տալիս, որ այս գործողությունը նախապես մանրամասնորեն ծրագրված է եղել: Ավելին, հաղորդագրության մեջ հնչում է բացահայտ սպառնալիք նույն մոտեցումը ԼՂ այլ բնակիչների նկատմամբ եւս կիրառելու վերաբերյալ»,- ասվում է ՀՀ ԱԳՆ հայտարարության մեջ:

Նշվում է, որ Ադրբեջանի այս գործողությունն անմիջականորեն ի ցույց է դնում, որ Հայաստանի կողմից արդեն իսկ տեւական ժամանակ բարձրաձայնվող էթնիկ զտումների վերաբերյալ ահազանգերն արտացոլում են առկա օրհասական վտանգների լրջությունը:

«Արցախի ժողովրդին շուրջ 8 ամիս սովի եւ այլ զրկանքների ենթարկելով, կանխամտածված եւ կամայական կերպով նրանց զրկելով մարդասիրական օգնություն ստանալու իրավունքից՝ ադրբեջանական կողմը հիմա էլ անցել է խոցելի վիճակում գտնվող Արցախի քաղաքացիների անհատական մակարդակով հետապնդմանը:

Ներգրավված միջազգային դերակատարներից, այդ թվում՝ ԿԽՄԿ-ից, պահանջում ենք ձեռնարկել հրատապ եւ ամենագործուն միջոցները՝ անհապաղ ազատելու եւ հայրենիք վերադարձնելու առեւանգված քաղաքացուն, վերջ տալու Արցախի քաղաքացիների նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացվող՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություններին, ինչպես նաեւ կանխելու այդ հանցագործությունների փոխակերպումը ցեղասպանության հանցագործության»,- նշվում է ԱՀ արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

Հուլիսի 29-ին հարյուրավոր քաղաքացիներ են հավաքվել Արցախում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի առաքելության գրասենյակի առջեւ՝ Ադրբեջանի կողմից առեւանգված 68-ամյա Վագիֆ Խաչատրյանին վերադարձնելու պահանջով: Հավաքին ներկա ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը, ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը, ԱՀ ներքին գործերի նախարար Կարեն Սարգսյանը, առեւանգված Վագիֆ Խաչատրյանի հարազատները առանձին հանդիպում են ունեցել ԿԽՄԿ Արցախի գրասենյակի պատասխանատուների հետ: Հանդիպումից հետո ԿԽՄԿ ներկայացուցիչը պատասխանել է ներկաների հարցերին՝ նշելով, որ հասկանում են իրավիճակի դժվարությունը, եւ վստահեցրել է, որ աշխատում են լուծում գտնել:

«Ոնց տարել եք, այնպես էլ հետ բերեք եղբորս, նրան բուժում պետք չէ»,- լրագրողների հետ զրույցում նշել է Վ. Խաչատրյանի եղբայրը:

Հուլիսի 30-ին ԿԽՄԿ-ն տեղեկացրել է, որ իրենց ներկայացուցիչներն այցելել են Լաչինի միջանցքում ձերբակալված բուժառուին. «Նրա հետ հանդիպել են մեր պատվիրակները, որոնցից մեկը բժիշկ է, եւ բուժառուին հնարավորություն է տրվել կապ հաստատել ընտանիքի հետ»:

Արթուր Թովմասյանը հրաժարականի դիմում է ներկայացրել

Հուլիսի 29-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը հրաժարական է տվել: «Իմ անձնական որոշմամբ քաղաքական պատասխանատվություն եմ վերցնում՝ հեռանալու Ազգային ժողովի նախագահի պաշտոնից, բայց միշտ հավատարիմ կմնամ 1991 թվականին մեր ժողովրդի կողմից հանրաքվեով ընդունված գաղափարին: Մինչեւ վերջին շունչս ծառայելու եմ Հայաստանի Հանրապետությանը եւ նրա ժողովրդին, Արցախի Հանրապետությանը եւ նրա ժողովրդին: Աստված պահապան հայ ժողովրդին»,- հայտարարել է Արթուր Թովմասյանը:

Ազգային ժողովի նախագահն ընտրվելու է աշխատանքային 2-օրյա ժամկետում

Հուլիսի 27-ին Արցախի Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ հրավիրվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան:

Օրակարգով նախատեսված օրինագծերը ներկայացրել է Արցախի նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Ժիրայր Միրզոյանը: Նրա խոսքով՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են Ազգային ժողովի նախագահի ընտրության համար ավելի ճկուն մեխանիզմների ներդրման հետ: «Ազգային ժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո թեկնածուների առաջադրման 10-օրյա ժամկետը եւ օրենքով սահմանված հերթական նիստ գումարելու ժամկետը եւ առանձնահատկությունները չեն համախատասխանում ներկա իրավիճակին եւ տեւական են: Առաջարկվում է վերանայել Ազգային ժողովի նախագահ առաջադրելու ժամկետը՝ գործող 10-օրյա ժամկետը փոխարինել աշխատանքային 2-օրյա ժամկետով, իսկ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցը քննարկել թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո Ազգային ժողովի առաջիկա նիստում՝ հերթական նիստի փոխարեն»,- նշել է նա՝ ավելացնելով, որ փոփոխությամբ Ազգային ժողովի նախագահի հրաժարականի դեպքում լիազորությունները դադարեցված են համարվում հրաժարականը ներկայացնելու պահից:

21 կողմ, 8 դեմ ձայների հարաբերակցությամբ նախագիծն ընդունվել է որպես օրենք:

Մարդու պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորելը կդիտարկվի որպես քրեորեն պատժելի արարք

Հաջորդ նախագծերի փաթեթում ներառված՝ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող եւ Քրեական դատավարության օրենսգրքում լրացում նախատեսող օրենքի նախագծերի ներկայացումը, ըստ զեկուցողի, ուղղակիորեն պայմանավորված են Քրեական օրենսգրքում առաջարկվող լրացումներով:

Առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ մարդու պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորելը կդիտարկվի որպես քրեորեն պատժելի արարք, դրանց դեպքում կարող են կիրառվել նաեւ ազատազրկման տեսքով պատժատեսակներ: «Վիրավորանքի եւ զրպարտության ապաքրեականացման արդյունքում նվազեցվել են այդ արարքների հանրային վտանգավորության աստիճանը, որն իր հերթին հանգեցրել է հանրային պատասխանատվության մակարդակի անկման: Նշվածի բացասական ազդեցությունն իր բնույթով առավել վտանգավոր է դառնում հատկապես ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում, երբ պետության մոտ բացակայում է անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը լիիրավ պաշտպանելու ամբողջական գործիքակազմ, որը նվազեցնում է վստահությունը հանրային իշխանության մարմինների նկատմամբ: Մյուս կողմից, հատկապես ռազմական դրության պայմաններում ոչ միայն բարձր են վիրավորանքի եւ զրպարտության հանրային վտանգավորության աստիճանը, այլ իրենց բնույթով դրանք նպաստում են նոր հանցագործությունների կատարմանը»,- նախագծի վերաբերյալ հիմնավորումներն է ներկայացրել Ժիրայր Միրզոյանը: Նշված արարքները քրեականացնելուն զուգահեռ՝ օրինագծով զգալիորեն խստացվում են արարքների համար սահմանված սանկցիաները՝ սահմանելով նաեւ ազատազրկման ձեւով պատժատեսակ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Փաթեթն ընդունվել է 23 կողմ, 4 դեմ, 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում կատարված փոփոխությունները տարակարծությունների տեղիք են տվել

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինափաթեթով առաջարկվող իրավակարգավորումների ընդունման պարագայում, Ժիրայր Միրզոյանի ներկայացրած հիմնավորմամբ, առավել հստակ եւ արդյունավետ կդառնան տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ կապված հայտարարված ռազմական դրության հետ:

Ներկայում գույքը վարձակալության տված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց զգալի մասը գտնվում է ԱՀ սահմաններից դուրս եւ գործնականում ստացվում է այնպես, որ գույքը հանձնվում է վարձակալության, դրա դիմաց բռնի տեղահանվածներին բնակարանային ապահովության նպատակով վճարները վճարվում են պետական բյուջեի միջոցներից եւ այդ գումարները փոխանցվում են ԱՀ սահմաններից դուրս: Օրենքում կատարվող փոփոխություններով առաջարկվում է ռազմական դրության պայմաններում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքի օգտագործման դիմաց ամենամսյա վճար վճարելու պարտականությունը հանել, միաժամանակ, եթե գույքը վերադարձվում է վնասված, գույքի օրինական տիրապետողի դիմումի հիման վրա նրան տալ անհրաժեշտ փոխհատուցում ԱՀ կառավարության սահմանած կարգով, ժամկետներում եւ չափով:

«Օրենքով կատարվող մեկ այլ փոփոխությամբ, ելնելով ռազմական դրության իրավական ռեժիմի առավել արդյունավետ ապահովման անհրաժեշտությունից, ի լրումն օրենքով սահմանված միջոցառումների եւ ժամանակավոր սահմանափակումների, սահմանել լրացուցիչ միջոցառումներ եւ սահմանափակումներ, մասնավորապես պետական եւ տարածքային մարմինների, դրանց հինարկների եւ կազմակերպությունների գործառույթների, դրանց իրականացման ձեւերի եւ եղանակների ժամանակավոր փոփոխություն կամ կասեցում, հեռուստատեսությամբ հեռարձակվող, համացանցով եւ ռադիոյով տարածվող նյութերի բովանդակության սահմանափակում, ԱՀ տարածքում ինտերնետային կայքերի, սոցիալական ցանցերի, ինտերնետային հավելվածների գործողության ժամանակավոր կասեցում, ինչպես նաեւ ինտերնետ հասանելիության մասնակի կամ ամբողջական սահմանափակում՝ ապահովելով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ռազմավարական նշանակության եւ պետական ապահովության ենթակա օբյեկտների եւ ենթակառուցվածքների, ինչպես նաեւ առանձին կազմակերպությունների ինտերնետ հասանելիությունը»,- իր խոսքում ասել է Ժիրայր Միրզոյանը: Միաժամանակ նախատեսվում է էներգետիկ, բնապահպանական, կապի, առողջապահության եւ կրթության ոլորտներում պետական հատուկ քաղաքականության իրականացում, պետական գնումների հատուկ ընթացակարգի սահմանում, էներգետիկայի եւ կապի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների եւ անձանց համար պարտադիր կատարման ենթական առաջադրանքների սահմանում, բնական ռեսուրսների օգտագործման եւ շահագործման հատուկ կարգերի սահմանում:

Օրինագծով նախատեսվող մեկ այլ փոփոխություն նպատակ ունի քաղաքական եւ հայեցողական պաշտոնների նման նախագահի կողմից նշանակվող որոշ քաղաքացիական պաշտոնների համար եւս սահմանել փոփոխության ավելի ճկուն գործիքակազմ: «Ռազմական դրության իրավական ռեժիմի պահպանման հիմնական եւ առանցքային պատասխանատուն նախագահն է, եւ նա կարող է լրացուցիչ պարտականություններ ու գործառույթներ վերապահել այդ մարմիններին: Ստեղծված պայմաններում, անհրաժեշտության դեպքում, քաղաքական կամ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, պայմանավորված իրենց պաշտոնի առանձնահատկություններով, կարող են փոփոխվել, ինչն ամրագրված է օրենքով: Առաջարկվում է ռազմական դրության պայմաններում նախատեսել հնարավորություն նախագահի կողմից նշանակվող քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց, մասնավորապես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի, հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի անդամի, քաղաքացիական ծառայության խորհրդի անդամի, հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի անդամի եւ նախագահի, պետական վիճակագրական խորհրդի անդամի եւ նախագահի, Քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալների լիազորությունների դադարեցման, այդ թվում՝ վաղաժամկետ դադարեցման համար»,- նշել է Ժ.Միրզոյանը:

Առաջարկվող փոփոխությունները մտահոգություն են առաջացրել պատգամավորների մոտ:

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը նշել է, որ ռազմական դրության իրավական ռեժիմը կապ չունի վիճակագրական վարչության խորհրդի, ԿԸՀ անդամի, Քննչականի պետի կամ տեղակալի հետ: «Պետական բուրգը բաղկացած է օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունից եւ քաղաքացիական ծառայություն իրականացնող անձանցից: Բուրգի մի մասը հանելով՝ բալանսը խախտվելու է: Սա կաթվածահար է անելու իրավական համակարգը: Օրինակ քննչականի պետը կարող է չբավարարել որեւէ պահանջ, չնայած նախագահն է նշանակել, բայց իրավունք է տրվում նրան պաշտոնից հանել: Ի՞նչ պետք է անի քննչականի պետը պաշտոնում մնալու համար: Պիտի ենթարկվի նախագահի կամքին, ոչ թե արդարադատությանը: Սա պետական ինստիտուտների մի մասի ոչնչացման ամենակարճ ճանապարհն է եւ ոչ մի կապ չունի ռազմական դրության իրավական ռեժիմի հետ»,- ասել է Արթուր Մոսիյանը՝ առաջարկելով օրինագիծը հետ տանել լրամշակման:

Ի պատասխան՝ Ժիրայր Միրզոյանը նշել է, որ ռազմական դրության իրավական ռեժիմի փոփոխությունները պատերազմից հետո անցել են մի քանի փուլ, որը պայմանավորված էր իրավիճակի անընդհատ սրմամբ. «Խոսքը նրա մասին է, որ ռազմական դրության իրավական ռեժիմի հետ կապված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման հետ կապված պաշտոնանկ արվի կամ լիազորությունները վաղաժամ դադարեցնի պաշտոնյան»:

«Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցության պատգամավոր Գեղամ Ստեփանյանը հիշեցրել է, որ գլխադասային հանձնաժողովում բացասական գնահատական է տրվել նախագծին: Նրա խոսքով՝ պարզ է, որ հարցը նախեւառաջ բարոյական տիրույթում է, բայց պետք է սեփականության իրավունքը գերակա պահել:

Արցախի «Արդարություն» խմբակցության անդամ Մետաքսե Հակոբյանը մտավախություն է հայտնել, որ օրենքը հարմարեցվում է նոր ազատումների եւ նոր նշանակումների շքերթին: Նույն խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանը շեշտել է, որ առաջարկող փոփոխություններով պետական մարմնի անկախությունը սահմանափակվում է, եւ եթե որոշակի ժամկետով նշանակված պաշտոնյան թերացել է իր աշխատանքում, կարելի է համապատասխան մարմինների կողմից հիմնավորել աշխատանքի կասեցումը ու պատասխանատվության ենթարկվել:

«Միասնական հայրենիք» խմբակցության ղեկավար Մարսել Պետրոսյանը նշել է, որ ներկա պահին Արցախի յուրաքանչյուր բնակիչ զրկված է իր հիմնարար իրավունքներից եւ ազատություններից, որն առաջին հերթին պետք է մտահոգի իշխանություններին, ու չպետք է մտածել այդ իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու մասին: «Տասնամյակներ շարունակ հանրապետության ղեկավարները, քաղաքական գործիչները տարբեր ատյաններում հպարտացել են, որ Լեռնային Ղարաբաղը ժողովրդավարական կղզի է Հարավային Կովկասում: Ամենաթանկն այս պահին Արցախում ապրող մարդու արժեքն է, եւ չպետք է սահմանափակել նրա իրավունքները»,- ասել է պատգամավորը՝ առաջարկելով կատարելագործել նախագիծը եւ նորից ներկայացնել ԱԺ-ին:

Օրինափաթեթի վերաբերյալ մտքերի փոխանակությամբ հանդես են եկել պատգամավորներ Մետաքսե Հակոբյանը, Արթուր Մոսիյանը, Դավիթ Գալստյանը, Արթուր Հարությունյանը: 18 կողմ, 9 դեմ ձայների հարաբերակցությամբ օրինափաթեթն ընդունվել է:

Քննարկվել է նաեւ ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» հարցը:

Օրենքի նախագծով առաջարկվող իրավակարգավորումների արդյունքում կստեղծվի իրավական հնարավորություն՝ կարգավիճակ սահմանելու նրանց համար, ովքեր մարտական գործողությունների ընթացքում իրենց ծառայողական կամ աշխատանքային (մասնագիտական) պարտականությունները կատարելիս կորցրել են կյանքը կամ վնասել առողջությունը: Օրինագիծը 26 կողմ ձայնով արժանացել է խորհրդարանի հավանությանը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Անհապաղ միջոցներ ձեռնարկել Արցախի Հանրապետությունում տեղակայված խաղաղապահ առաքելությանը միջազգային մանդատով օժտելու համար

Հուլիսի 21-ին եւ հուլիսի 27-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ գումարվել են Արցախի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջաններ, որոնց ընթացքում ընդունվել են ուղերձներ:

Հուլիսի 21-ին ընդունված ուղերձը վերաբերում էր ՄԱԿ-ի կողմից Արցախում խաղաղություն պարտադրելու համար պատշաճ միջոցներ ձեռնարկելուն:

«2020թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի անմիջական մասնակցությամբ եւ օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ներգրավմամբ, կոպտորեն խախտելով ուժի եւ ուժի կիրառման սպառնալիքի բացառման սկզբունքը, Ադրբեջանը սանձազերծեց 44-օրյա ռազմական ագրեսիա, որը դադարեցվեց Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների 2020թ. նոյեմբերի 9-ի համատեղ հայտարարությամբ: Եռակողմ հայտարարությամբ սահմանված կարգով Արցախի (Լեռնային Ղարաբաղ) Հանրապետությունում տեղակայվել է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմ 5 տարի ժամկետով՝ հետագայում երկարաձգման հնարավորությամբ, եթե Կողմերից որեւէ մեկը ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

Եռակողմ հայտարարությամբ Ռուսաստանի Դաշնությունն ըստ էության իրացրել է ՄԱԿ-ի կանոնադրության 6-րդ գլխում սահմանված վեճերի խաղաղ կարգավորման դրույթները, մասնավորապես՝ 33-րդ հոդվածի 1-ին մասը, հակամարտության կողմերի միջեւ վեճի կարգավորումը տեղափոխելով «միջնորդության, համաձայնության եւ բանակցությունների» դաշտ, ինչը ձախողվել է Ադրբեջանի կողմից դրսեւորվող շարունակական եւ լայնածավալ ագրեսիայի հետեւանքով՝ հակամարտության ուղղակի եւ անուղղակի կողմերի ներգրավմամբ ստեղծելով տարածաշրջանային ճգնաժամ: Մյուս կողմից՝ շարունակվում է անտեսվել Արցախի Հանրապետության սուբյեկտայնությունն ու Արցախի ժողովրդի կամարտահայտությունը:

Արցախի ժողովուրդը, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի ու սկզբունքների, ինչպես նաեւ ԽՍՀՄ օրենսդրության համապատասխանությամբ իրացրել է ինքնորոշման իր իրավունքը՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակելով Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, այնուհետեւ դեկտեմբերի 10-ին անցկացնելով Անկախության հանրաքվե:

Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորախումբը օժտված չէ միջազգային մանդատով, հանգամանք, որը կանաչ լույս է վառում Ադրբեջանի կողմից Եռակողմ հայտարարության եւ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների խախտումների, տարածաշրջանի անվտանգության եւ կայունության շարունակական վտանգման համար: Ասվածի փաստական ապացույցներն են Ադրբեջանի կողմից Եռակողմ հայտարարությամբ ամրագրված հրադադարի ռեժիմի ու միջազգային իրավունքի նորմերի կոպտագույն խախտումները, այդ ամենի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՄԱԿ-ի միջազգային արդարադատության դատարանի որոշումներով, ԵԽԽՎ-ի բանաձեւով արձանագրումները, մասնավորապես՝ Բերձորի (Լաչինի) միջանցքի արգելափակման հետեւանքով Արցախի՝ արդեն յոթ ամսից ավել շարունակվող շրջափակումը, ենթակառուցվածքների խափանումը, քաղաքացիական բնակչության նկատմամբ իրականացվող շարունակական ահաբեկումները, ազգային ատելության քարոզչությունը, հայկական եկեղեցիների, պատմամշակութային, կրոնական եւ այլ հուշարձանների միտումնավոր ոչնչացման եւ վանդալիզմի արձանագրված բազմաթիվ դեպքերը: Նշված եւ այլ մեթոդներով էթնիկ զտումների քաղաքականությունը մարդկության դեմ ուղղված հանցագործության բացահայտ դրսեւորումներ են:

Հիմք ընդունելով այդ ամենը, ինչպես նաեւ ՄԱԿ-ի՝ գալիք սերունդներին պատերազմի, էթնիկ զտումների եւ ցեղասպանության արհավիրքից փրկելու վճռականությունն ու միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանման պատասխանատվությունը՝ Արցախի ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ Ազգային ժողովը, կոչ է անում.

- Հայաստանի Հանրապետությանը՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել Արցախի Հանրապետությունում տեղակայված խաղաղապահ առաքելությանը միջազգային մանդատով օժտելու համար՝ սահմանված ընթացակարգով դիմելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, Գլխավոր ասամբլեային՝ առաջարկելով պատշաճ քայլեր կատարել տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության պահպանման ուղղությամբ:

- Միջազգային հանրությանը՝ ի դեմս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ-երկրների՝

Հավատարիմ լինելով ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին գլխում սահմանված նպատակներին ու սկզբունքներին եւ առաջնորդվելով ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխում սահմանված կարգով՝ ընդունել իմպերատիվ բնույթի որոշում (բանաձեւ)՝ ձեռնարկելով եւ սահմանելով Արցախում խաղաղություն պարտադրելու գործուն միջոցներ:

Արցախի Հանրապետությունը հանձնառու է փրկելու իր ժողովրդին պատերազմի արհավիրքից, վերահաստատելու հավատը մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների, ինչպես նաեւ մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, ուստի այդ կառույցներից ակնկալում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն միջազգային իրավունքի նորմերից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, ազատության պայմաններում խթանել Արցախի ժողովրդի արժանապատիվ կյանքի ապահովումը»,- ասվում է ուղերձում:

Ազգային ժողովը դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչման խնդրանքով

Հուլիսի 27-ին կայացած նիստում քննարկվել է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից ներկայացված ուղերձը:

Անդրադառնալով պատմական իրողություններին, Արցախի ինքնորոշման իրավունքի իրացման անհրաժեշտությանը, Ադրբեջանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի դրույթների չկատարմանը, ահազանգելով Ադրբեջանի կողմից պաշարման ենթարկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությանն սպառնացնող վտանգների մասին, հաշվի առնելով Արցախի բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացվող ցեղասպան քաղաքականությունը եւ նրա բնակչության առջեւ ծառացած լրջագույն գոյաբանական սպառնալիքները՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Ազգային ժողովը դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության անկախության ճանաչման խնդրանքով:

«Ադրբեջանը, Հայաստանի հետ միաժամանակ, 1992 թվականի հունվարի 30-ին անդամագրվելով Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցությանը (ԵԱՀԽ, 1995 թվականից՝ ԵԱՀԿ), ստանձնել է պարտավորություններ: ԵԱՀԽ-ն ճանաչել է այդ երկրների ինքնիշխանությունը՝ պայմանով, որ նրանք իրենց հերթին ընդունում են Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցում եղած տարաձայնությունների փաստը եւ համաձայնվում են, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը որոշվելու է միջազգային համաժողովում, որը տեղի է ունենալու ԵԱՀԽ-ի հովանու ներքո: Երկու պետություններն էլ տվել են իրենց համաձայնությունը՝ խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու պարտավորություն ստանձնելով»,- ասվում է ուղերձում:

Այնուհետեւ թվարկվում են Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիաները. «Հետապնդելով Արցախը հայաթափելու եւ ուժի կիրառմամբ այն իր կազմի մեջ բռնակցելու անթաքույց նպատակ եւ անպատժելիության պայմաններում խախտելով միջազգային իրավունքի գործող նորմերը, Ադրբեջանը հետեւողականորեն ապօրինի կերպով զավթում է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության նորանոր տարածքներ, պարբերաբար գնդակոծում հայկական բնակավայրերը, սպանում եւ ահաբեկում խաղաղ բնակչությանը, ամեն կերպ խաթարում նրա բնականոն կենսագործունեությունը՝ անտանելի դարձնելով մարդկանց կյանքը, միեւնույն ժամանակ իրականացնում է հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ վանդալիզմի ակտեր»:

«Ահազանգելով, որ Ադրբեջանի կողմից պաշարման ենթարկված ԼՂ (Արցախի) Հանրապետության բնակչությունը կանգնած է ՀԱՅՐԵՆԱԶՐԿՎԵԼՈՒ եւ Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող ՑԵՂԱՍՊԱՆ գործողությունների վտանգի առջեւ.

Հաշվի առնելով Արցախի բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացվող ցեղասպան քաղաքականությունը եւ նրա բնակչության առջեւ ծառացած լրջագույն գոյաբանական սպառնալիքները՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Ազգային ժողովը՝ Արցախի ժողովրդի առաջնային մանդատով օժտված բարձրագույն ներկայացուցչական մարմինը, արտահայտելով հանրապետության ողջ բնակչության կամքն ու դիրքորոշումը, դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին եւ կոչ անում՝ առաջնորդվելով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքով, հիմք ընդունելով 1991 թվականի սեպտեմբերի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագիրը, Անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքները, ԼՂՀ Գերագույն խորհրդի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հիմունքների մասին» 1992 թվականի հունվարի 6-ի օրենքը, ԼՂՀ Գերագույն խորհրդի «ԼՂՀ պետական անկախության հռչակագրի տեքստը հաստատելու մասին» 1992 թվականի հունվարի 6-ի որոշումը, ճանաչել Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության անկախությունը»:

Նշվում է, որ ճանաչման համար կան բոլոր անհրաժեշտ հիմքերը: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունն իր ինքնորոշման իրավունքն իրականացրել է՝ չխաթարելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, չխախտելով ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան դրույթները, «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու մասին» 1990 թվականի ապրիլի 3-ի օրենքի սահմանումը, համաձայն որի՝ «Ինքնավար հանրապետություններն ու ինքնավար կազմավորումներն իրավունք ունեն ինքնուրույնաբար վճռելու միության մեջ կամ նրա կազմից դուրս եկող միութենական հանրապետությունում մնալու հարցը, ինչպես նաեւ կարգավորելու սեփական պետական իրավական կարգավիճակի խնդիրը», միջազգային իրավունքի բոլոր նորմերը:

«Առավել քան համոզված ենք, որ ՄԱԿ անդամ պետությունների կողմից ԼՂ (Արցախի) Հանրապետության ճանաչումը մեր ժողովրդի համար կդառնա անվտանգության վստահելի երաշխիք, կնպաստի իր պատմական հայրենիքում նրա բնականոն կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ինչպես նաեւ հարավկովկասյան տարածաշրջանում կայունության, երկարաժամկետ ու հաստատուն խաղաղության ապահովմանը.

- Խորապես համոզված ենք, որ վերահաս ողբերգությունը կանխելու միակ միջոցը Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության անկախության ճանաչումն է՝ ՃԱՆԱՉՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ սկզբունքի հիման վրա»,- ասված է ուղերձում:

Պատգամավորները միաձայն կողմ քվեարկեցին, որոշումն ընդունվեց:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Համաժամանակյա հանրահավաքներ Երեւանում եւ Ստեփանակերտում

Հուլիսի 25-ին Երեւանի Ազատության հրապարակում եւ Արցախի Վերածննդի հրապարակում համաժամանակյա հանրահավաքներ են տեղի ունեցել՝ ուղղված Արցախում հումանիտար ճգնաժամը հաղթահարելուն: «Արցախը 120 հազար չէ, Արցախը բռնի տեղահանված քաղաքացիներս ենք, 90-ականների պատերազմի պատճառով տարագիր դարձած քաղաքացիներն են»,- Երեւանի հանրահավաքում իր բացման խոսքում ասաց «Մենք Արցախն ենք» նախաձեռնող խմբի անդամ Լիանա Պետրոսյանը՝ համախմբման կոչ անելով արցախցիների ապրելու իրավունքի պահանջատիրության համար: Հավաքվածները վանկարկում էին՝ «Արցախ», «Միացում»: Վերածննդի հրապարակում հնչեց ՀՀ օրհներգը, իսկ Ազատության հրապարակում՝ Արցախի օրհներգը:

Երեւանում ու Ստեփանակերտում ելույթ են ունեցել ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ԱՀ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, հնագետ, Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար Համլետ Պետրոսյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Դավիթ Հակոբյանը, Արցախի Շիրակացու ճեմարանի տնօրեն Անահիտ Ղարաղազարյանը, Արցախի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Գեւորգ Մուրադյանը, ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանը, տեղահանված Սերոբ Նալթակյանը:

Ազատության հրապարակում երգերով հանդես են եկել հադրութցի Արման Հայրիյանը, երգիչներ Արսեն Սաֆարյանը, Վարդան Բադալյանը:

«Մի խեղճ էշ ընկնում է փոսը, տերը գալիս, չի կարողանում հանել, անճար մարդ է. ասում է՝ հողով ծածկեմ՝ էշը չչարչարվի, չտառապի: Բահերով հողը լցնում են էշի վրա, էշն իրեն թափ է տալիս, ոտի տակը հողը լցնում է՝ բարձրանում: Ինչքան լցնում են՝ էշը թափ է տալիս, ոտի տակի հողը բարձրանում՝ հասնում է իրենց մակարդակին, գնում են»,- հին միջնադարյան այս առակը, Ազատության հրապարակում ընթացող հանրահավաքի ժամանակ պատմեց ՀՀ վաստակավոր արտիստ Դավիթ Հակոբյանը՝ հարցնելով. «Բա մի էշի չափ էլ չկա՞նք: Ինչի՞ ենք նստել սպասում, որ ինչ որ մեկը գա մեզ փրկի: Ե՞րբ է եկել փրկի, որ այսօր գա: Ոչ ոք չի փրկելու մեզ: Ինչի՞ ենք այսպես համակերպվել նվաստացման հետ, պարտվածի հետ»:

Ելույթներից հետո Վերածննդի հրապարակում հավաքվածները երթով շարժվել են դեպի Ստեփանակերտի Զինվորական պանթեոն, իսկ Ազատության հրապարակում գտնվողները՝ դեպի Եռաբլուր:

Արցախի մեր ժողովուրդը եկվոր չէ. Արամ Ա

Ազատության հրապարակում հուլիսի 25-ի տեղի ունեցած հանրահավաքում ցուցադրվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի տեսաուղերձը: Նա հայրապետական օրհնություն հղեց հանրահավաքի մասնակիցներին, արցախցիներին՝ վստահեցնելով, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությամբ՝ իր բոլոր կառույցներով, նաեւ Սփյուռքը, արցախցիների հետ է.

«Մեր ժողովրդի բոլոր զավակներին վստահեցնում եմ՝ մենք, որպես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, մեր միաբանությամբ, մեր թեւերով, մեր կառույցներով, մարտիկներով եւ ողջ Սփյուռքը Ձեզ հետ է: Մենք քաջ գիտենք, որ Արցախը գտնվում է իր ժամանակակից պատմության ամենաճակատագրական պահին, Այս կացության դեմ մենք բոլորս պետք է մեր կամքը, հավատքը ավելի ամրապնդենք եւ Արցախի ապագայի նկատմամբ մեր տեսլականը միշտ պայծառ պահենք: Անցյալում Արցախը մերն էր, այսօր Արցախը մերն է, եւ հավատացեք, որ Արցախը միշտ պիտի մնա Արցախի ժողովրդինը, որովհետեւ մեր ժողովուրդը ողջ պատմության ընթացքում Արցախում էր եւ իր քրտինքը միախառնել է Արցախի հողին:

Արցախում են գտնվում մեր ժողովրդի արժեքները, սրբությունները, ավանդությունները: Արցախը միշտ ինքնավար է եղել: Արցախի մեր ժողովուրդը եկվոր չէ: Արցախի մեր ժողովուրդը Արցախի ծնունդն է: Պատմության ընթացքում երբեք Արցախը ենթակա չի եղել Ադրբեջանին»:

Արցախը վաճառքի ենթակա չէ

Ազատության հրապարակում հանրահավաքը բացեց Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Իր խոսքում նա ասաց, որ այսօր գտնվում ենք այն նույն իրավիճակում, ինչը ժամանակին Խրիմյան Հայրիկն էր բնութագրում. «Մի մեծ առեւտուր է ընթանում, Արցախը դրված է վաճառքի, իսկ երկաթե շերեփավորները՝ ախորժակները սրած, սպասում են իրենց պատառին: Որքան էլ խաղաղության սին հույսերի գինով հարբենք ու փորձենք մենք մեզ խաբել՝ դրանից իրականությունը չի փոխվի: Ու ինչպես խրոնիկ հարբեցողի դեպքում է լինում՝ ամեն ինչ գնալու է դեպի կործանում»:

«Արցախը ենթակա չէ վաճառքի, Արցախը աստվածապարգեւ Հայաստան աշխարհի անմնացորդ մասն է, Արցախը սրբություն է, Արցախը հող է, Արցախը պատմություն է եւ ժողովուրդ է: Այսօր կանգնել Արցախի կողքին՝ կնշանակի կանգնել մեր խղճի եւ արդարության կողքին, կանգնել Արցախի կողքին՝ կնշանակի հավատարիմ մնալ Աստծո պատգամներին»,- հայտարարեց Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը՝ հավելելով, որ մեր երկաթյա շերեփը եղբայրասիրությունն ու հայրենասիրությունն են դառնալու:

Հանրահավաքի մասնակիցները դրան ծափերով եւ «Միացում» վանկարկումներով արձագանքեցին:

Արցախի թեմի առաջնորդը այսօր, մեր բոլոր մեղքերից ավելին է համարում անտարբերության 8-րդ՝ մահացու մեղքը եւ նկատում, որ եթե կրավորական եւ անտարբեր կեցվածքով ենք վերաբերվում տեղի ունեցողին, նշանակում է մեղսակից ենք դառնում Արցախը վաճառողներին: Նա տարակուսեց՝ մի՞թե անհրաժեշտ է էլեկտրաէներգիայի կամ տրանսպորտի վարձավճարները 50 դրամով թանկացնել, որպեսզի հարյուր հազարավոր հայեր փողոց դուրս գան եւ արդարություն պահանջեն, մի՞թե հայի գրպանին դիպչելն ավելի ծանր հանցանք է, քան հազարամյա հայրենիքը մաս-մաս վերացնելը. մի՞թե սա է հայը: Նա հայտարարեց, որ արցախյան շարժումը չի ավարտվել, եւ այն ավարտին հասցնելու համար մենք պետք է բռունցքվենք, եւ եթե կորցնենք Արցախը՝ կկորցնենք մեր ինքնությունն ու արժանապատվությունը: Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը արցախցիներին փոխանցեց Վեհափառի հայրապետական օրհնությունը:

Տ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Պահանջում ենք ՀՀ-ից՝ հրաժարվել Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու մտահղացումից

«Տասնամյակներ շարունակ Ադրբեջանը վարել է Արցախում էթնիկ զտման քաղաքականություն, այսօր էլ անցել է իր հանցավոր ծրագրերի իրագործմանը: Պլանավորման, ծրագրավորման ու նախապատրաստության փուլերը վաղուց ավարտվել են եւ սկսվել է ոճրագործության իրագործման փուլը»,- հուլիսի 25-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում ասաց Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը:

«Ավելի քան 7 ամիս է՝ Արցախի ժողովուրդը պայքարում է իր կյանքի, պատմության, ներկայի ու ապագայի, իր տեսակի պահպանության, համայն հայության արժանապատիվ գոյության, իրավունքի ու հնարավորության համար: Արցախի ժողովուրդը ենթարկվում է ֆիզիկական ու հոգեբանական բռնության եւ դրա սպառնալիքի, խոշտանգման, Արցախի ժողովրդին կանգնեցրել են սովի առաջ, զրկում են այսօր եւ վաղը ապրելու, գոյատեւելու տարրական հնարավորություններից ու պայմաններից: Այս ամենի նպատակը Արցախում կյանքն անտանելի դարձնելն է, արցախցուն տարագիր դարձնելն է: Հույս ունենալով, որ միջազգային հանրությունը, համայն հայությունն ու Հայաստանի Հանրապետությունը կձեռնարկեն Արցախի ժողովրդին էթնիկ զտումից զերծ պահելու որեւէ քայլ, Արցախի ժողովուրդը հերոսաբար ու համբերատար կրել է բոլոր զրկանքները: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ միջազգային հանրության պասիվությունն ու ՀՀ-ի զիջողականությունը լրացուցիչ խթան հանդիսացան եւ խրախուսեցին Ադրբեջանին՝ դիմելու Է՛լ ավելի կոշտ ու ծայրահեղ քայլերի, այդ ամենին զուգահեռ՝ նսեմացնելով նույն միջազգային հանրության ու միջնորդ երկրների հեղինակությունը: Այդ պատճառով Արցախում սկսվեց համաժողովրդական շարժում, որը պետք է հիմք դառնա մեր զարթոնքին ու համախմբմանը, եւ այն արդեն իրականություն է:

Սիրելի հայրենակիցներ, ես ուզում եմ խոնարհվել Ձեր առաջ, Ձեր հաստատակամության, ամրության, մերօրյա դժվարության ու այս սարսափելի օրերը հաղթահարելու Ձեր կամքի ու տոկունության համար: Թեեւ դուք ամեն օր սպասում եք, թե երբ կվերջանա այս մղձավանջը, բայցեւ հասկանում եք, որ այս պայքարը երկար է տեւելու:

Մեզ անհրաժեշտ է Է՛լ ավելի ամրանալ, Է՛լ ավելի համախմբվել, որպեսզի կարողանանք հաղթահարել բոլոր մարտահրավերները: Խոնարհվում եմ ձեզանով, որովհետեւ տեսնում եմ, թե ինչպես են ծեր ու մանուկ իրենց բաժին ծանրությունը կրում, ինչպես են որդեկորույս մայրերը թաքցնում արցունքներն ու հպարտ կեցվածքով ու հայացքով հայրենասիրություն ու նվիրում կրթում, երբ հանուն մեր արժանապատիվ գոյության զայրույթն ու ցավը ձեր մեջ խեղդելով՝ ինչպես եք մի կերպ կերակրում ձեր երեխաներին, ինքներդ ձեր մտքերում անընդհատ կրկնելով՝ լավ է սոված ու մերկ լինել, քան ապրել անհայրենիք ու առանց արժանապատվության: Հասկանում եմ նաեւ մեր եւ ձեր հիասթափությունն ու մտահոգությունը, երբ այդ ամենին զուգահեռ անընդհատ ստանում ենք թիկունքից հարվածներ, ամենատարբեր շրջանակների կողմից փորձ է արվում նսեմացնել ձեր պայքարը, արժեզրկել այն, շարունակվում է իշխանատենչությունը, անձնական եւ քաղաքական շահախնդրությունը:

Ցավում եմ, որ մեր շարքերում կան այդպիսիները: Մենք պետք է սառնասրտորեն ընդունենք այս ամենը եւ համբերատար գտնվենք՝ գիտակցելով, որ կլինեն նաեւ անհամբերներ, անհավասարակշիռներ: Բայց, սիրելի՛ ժողովուրդ, հավատացեք, որ համաժողովրդական շարժումը կարողացել է սթափեցնել ու արթնացնել շատերին, մեր հայրենակիցները Արցախում եւ ՀՀ-ում ընդամենը օրերի ընթացքում իրականացրել են մեր՝ արցախցիներիս նկատմամբ իրականացվող ոճրագործության մասին իրազեկման ակցիաներ, միջազգային ամենատարբեր հարթակներ սկսել են ուշադրություն դարձնել բարձրաձայնվող խնդրին, ամենաբարձր մակարդակներում նախաձեռնվել են հանդիպումներ, քննարկումներ, միջազգային լրատվամիջոցներն ավելի ակտիվորեն են սկսել ներկայացնել իրավիճակը, հնչել են բազմաթիվ արձագանքներ, գնահատականներ, եւ հարցի շուրջ ուշադրությունը նոր ընթացք է ստացել:

Մենք կարողացել ենք անել ամենակարեւորը՝ վերահաստատել ու ապացուցել, որ Արցախը եւ Արցախի ժողովուրդը չեն կարող լինել Ադրբեջանի կազմում, երբեք, ոչ այսօր եւ ոչ էլ վաղը: Սա քմահաճույք չէ, սա Արցախի ժողովրդի գոյության անբացարկելի նախապայմանն է»:

Գուրգեն Ներսիսյանը հակադարձեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ նույն օրը կայացած ասուլիսում արած հայտարարություններին: Փաշինյանը, պատասխանելով արցախցիներից մեկի դիտարկմանը, թե Արցախում մարդիկ քաղցած են, իսկ վարչապետի կինը իր այգու բերքի նկարներն է հրապարակում, ասել է, որ ՀՀ-ն Արցախին 150 միլիարդ դրամի աջակցություն է տվել. «150 միլիարդ դրամ ենք տվել, գոնե բադրջան աճեցնեք: Առավոտից իրիկուն լայվ մտնելու փոխարեն գնացեք բադրջան աճացրեք, որ մարդիկ բադրջանի սոված չմնան: Ի՞նչ եք ուզում, ուզում եք Հայաստանի ինքնիշխանությունը մատաղ անե՞նք: Ո՞ւմ առաջ եք ուզում մատաղ անեք, ուզում եք Հայաստանի պետությունը մատաղ անե՞ք»:

Գուրգեն Ներսիսյանն, ըստ էության, հակադարձելով Փաշինյանին, ասաց. «2023 թվականին Արցախի շրջափակման ընթացքում Արցախի ժողովուրդը կազմակերպել է ավելի մեծ ծավալի գյուղատնտեսական աշխատանքներ, քան 2020 թվականի 44-օրյա պատերազմին հաջորդած երկու տարիներին: Այդ ամենը կատարվել է ադրբեջանական զինված ուժերի կրակի տակ եւ մեր քաղաքացիների կյանքի եւ մահվան գնով:

→ 5

Պահանջում ենք ՀՀ-ից՝ հրաժարվել Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու մտահղացումից

4 ← Մեր աշխատանքի արդյունքն է, որ ապրելով լիակատար շրջափակման պայմաններում՝ Արցախի ժողովուրդը կարողանում է գտնել որոշակի սնունդ սովի չմատնվելու համար: Ցավոք, արդեն տեւական ժամանակ է՝ չունենք մեր նվազագույն մթերքը բնակիչներին հասցնելու, բերքը հավաքելու, սովորական հացը քաղաքացուն հասանելի դարձնելու, հիվանդին հիվանդանոց հասցնելու հնարավորություն: Այս ամենի մեղավորը հայտնի է Ադրբեջան անունով: Արցախի ժողովուրդն այստեղ մեղքի բաժին չունի: Այո, ՀՀ-ի ժողովուրդը, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա՝ ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Արցախի ժողովրդին, որի համար երախտագիտություն ենք հայտնում, բայց այդ միջոցները շրջափակման ընթացքում օգտագործվել եւ հիմա էլ օգտագործվում են բացառապես Արցախի 40 հազար տեղահանված քաղաքացիներին, 30 հազար երեխաներին եւ շրջափակման ընթացքում աշխատանքից եւ եկամտից զրկված մեր ավելի քան 50 հազար քաղաքացիների ու ընտանիքների գոյությունը պահպանելու համար: Պատրաստ եմ մանրակրկիտ հաշվետվություն ներկայացնել պաշտոնը ստանձնելուց հետո ծախսված յուրաքանչյուր դրամի համար: Այս ամենը ներկայացնելուց հետո կրկին համոզմունք եմ ներկայացնում, որ Արցախում ստեղծված իրավիճակն Արցախից դուրս կամ չի ընկալվում, կամ կան թյուրընկալումներ»:

Նա հայտարարեց, որ Հայաստանում ընթացող ցույցերը, հանրահավաքները որեւէ տեղից չեն կառավարվում. «Մենք համոզված ենք, որ ՀՀ ժողովուրդը համաձայն չէ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելուն եւ որեւէ մեկին նման լիազորություն չի տվել, ու հարկ եղած դեպքում պատրաստ ու կարող է հայտարարել դա: Մենք գիտակցում ենք, որ Արցախի ժողովրդի շահերի պաշտպանն ու այս պահին մեր շահերը միջազգային հարթակներում առաջին հերթին ներկայացնողը ՀՀ-ն է եւ աշխարհասփյուռ հայությունը, այդ պատճառով Արցախի ժողովրդի անունից ուզում ենք դիմել ՀՀ ժողովրդին, աշխարհում ապրող բոլոր հայերին՝ մեր դիրքորոշումը հայտնել ու մեր պահանջը հղել Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ դրանք ներկայացնելով կետ առ կետ: Արցախի ժողովրդի ճակատագիրը կարող է որոշվել միայն Արցախի ժողովրդի կողմից, որեւէ մեկը լիազորված չէ մեր անունից որոշելու մեր ապագան, իսկ Արցախի խաղաղասեր ժողովուրդը պատրաստ է ստանձնել իր բաժին պատասխանատվությունը այդ հակամարտության կարգավորման հարցում»,- ասաց Ներսիսյանը:

Նա, դիմելով ՀՀ իշխանություններին, հայտարարեց՝

«- Արցախն ու Արցախի ժողովուրդը չեն կարող լինել Ադրբեջանի կազմում,

- Անընդունելի է ՀՀ-ի կողմից Արցախն ու Արցախի ժողովրդին Ադրբեջանի կազմում ճանաչելու ցանկացած բանավոր կամ գրավոր հայտարարություն: Ինչպես վկայում են տեղի ունեցող իրադարձությունները, դրանք կործանարար են Արցախի համար եւ նպաստում են Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի նկատմամբ նորանոր հանցանքներ կատարելուն,

- Տասնամյակներ առաջ ծրագրվող ցեղասպանությունից փրկվելու համար համայն հայության անվերապահ սատարմամբ Արցախի ժողովուրդն օգտվել է ինքնորոշվելու իր միջազգային իրավունքից, ստեղծել է պետություն, կազմակերպել է արդի աշխարհակարգում ընդունված մոդելի պետական կառավարման համակարգ եւ ձեւավորել կայուն, ինքնակառավարվող, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի, մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների հարգման հիման վրա հիմնված հասարակարգ ու իրավակարգ, ուստի Արցախը չի կարող դիտարկվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության մեջ, քանզի այն վաղուց կայացած քաղաքական միավոր է,

- Արցախի ժողովրդի ինքնապահպանությունն ու դրա հրամայականով ինքնորոշման իրավունքի իրացումը համայն հայության կամարտահայտությունն է, եւ որեւէ մեկը, որեւէ իշխանություն Արցախի, Հայաստանի եւ աշխարհասփյուռ հայության անունից լիազորված չէ զիջելու Արցախի ժողովրդի իրավունքները եւ ընդունելու որոշում Արցախը հոշոտելուն պատրաստ Ադրբեջանի մաս ճանաչելու մասին:

- Արցախի ժողովրդի իրավունքները, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքը հարգելը եւ անվտանգությունը երշխավորելը պետք է լինի ոչ թե բանակցությունների հետեւանք կամ արդյունք, այլ տարածաշրջանում խաղաղության հասնելու եւ փոխվստահելի մթնոլորտում բանակցություններ վարելու պայման: Հակառակը կամ այլընտրանքը Արցախի ժողովրդին խոշտանգելու, ֆիզիկապես ոչնչացնելու գնով հպատակեցնելու քաղաքականությունն է: Ադրբեջանը բաց ու հրապարակայնորեն ցուցադրում է այն, ինչն սպասվում է հայերին ադրբեջանական հպատակության ներքո: Տեսեք եւ հրաժարվեք դրան նպաստելուց:

Պահանջում ենք ՀՀ-ից՝ հրաժարվել Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու մտահղացումից եւ հարաբերությունների քաղաքական կարգավորման նման մոտեցումից: Այդ մոտեցումը ունակ է ապահովելու տարածաշրջանում խաղաղությունը եւ Արցախի ժողովրդի անվտանգ ու արժանապատիվ գոյությունը, ավելին՝ դա չի կարող երաշխավորել նույնիսկ ՀՀ գոյությունը, որովհետեւ թուրք-ադրբեջանական տանդեմի խնդիրը ոչ թե Արցախն է, այլ ողջ հայ ժողովուրդն ու ազգային պետականությունը: Վերջին շրջանում մենք մեզ պատեպատ ենք տալիս, մեր ժողովուրդը պատռում է իրեն, որ բոլորիս ընկալելի լինի, թե ինչ վիճակում է հիմա Արցախը: Գուցե Ձեզ թվում է, թե մենք ողբում կամ լաց ենք լինում, չմտածեք հանկարծ այդպես, մենք փորձում ենք կանգնած մնալ առանց ծնկելու, որպեսզի դուք մեր պատճառով չկոտրվեք, չխեղդվեք ու կարողանաք ուժ հավաքել մեր կողքին կանգնելու համար: Գուցե մենք օր օրի կորցնում ենք մեր գիտակցությունը, գունատվում ու հյուծվում ենք, բայց համոզված եղեք, մենք հայրենիքը երբեք չենք ուրանալու. բացվելու է լուսապայծառ արեւը եւ շողշողալու է Արցախն ու արցախցին»:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արցախում ՀՕՄ-ի իրականացրած ծրագրերի մասին

Հուլիսի 2-ին Ստեփանակերտում կայացել է Հայ Օգնության Միության Արցախի մեկուսի մասնաճյուղի 18-րդ տարեկան ընդհանուր անդամակցական ժողովը:

Արցախի շրջափակման ու տարբեր խնդիրների առկայության պարագայում հրավիրված ժողովը քննել է միավորի վարչության 21-ամսյա գործունեությունը, նախանշել առաջիկա գործունեության հիմնական ուղղությունները: Ժողովին առցանց մասնակցում էր ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության անդամ ընկ. Համեստ Պեոճեքյանը: Հաշվետու ժողովին ներկա էր ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ ընկ. Ալյոնա Գրիգորյանը: Ժողովի վերջում ընտրվել է ՀՕՄ-ի Արցախի միավորի վարչության նոր կազմ՝ Լիլիթ Մարտիրոսյան, Մելանյա Բալայան, Տաթեւիկ Հովհաննիսյան, Իրինա Գրիգորյան, Անահիտ Գասպարյան:

«Ապառաժ»-ը ՀՕՄ-ի Արցախի միավորի գործունեության ու կատարած աշխատանքների մասին զրուցել է ՀՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի վարչության ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանի հետ: Նրա խոսքով՝ շրջափակման պայմաններում շատ դժվար էր նույնիսկ անդամակցական ժողովի կայացումն ապահովել, քանի որ վառելիքի սղության պատճառով մի շարք բնակավայրերի ընկերուհիներ չեն կարողացել հասնել Ստեփանակերտ, իսկ ԿՎ անդամ Համեստ Պեոճեքյանը ժողովին առցանց է մասնակցել:

Լիլիթ Մարտիրոսյանը նշել է, որ ՀՕՄ-ի Արցախի միավորը, որպես Արցախում գրանցված եւ գործող բարեսիրական-հասարակական կազմակերպություն, պետական կառույցների կողմից ճանաչված է եւ համագործակցում է ԱՀ կառավարության, տարբեր նախարարությունների, պետական ու հասարակական կազմակերպությունների հետ: «ՀՕՄ-ի Արցախի Միավորը, որպես ուղեկից կազմակերպություն, համագործակցել է ՀՅԴ Արցախի կառույցի հետ, ինչի արդյունքում կազմակերպվել են համատեղ միջոցառումներ, վարչությունն ստացել է փոխադարձ գործակցություն ու օժանդակություն»,- ասել է ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհին՝ ավելացնելով, որ մի շարք ծրագրեր են իրականացրել նաեւ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության հետ:

Լ. Մարտիրոսյանի խոսքով՝ հաշվետու ժամանակաշրջանում ՀՕՄ-ը Արցախում շարունակել է իրականացնել կրթության ոլորտի զարգացմանը միտված իր մնայուն ծրագրերը: «2021-2022 ուսումնական տարվա համար ՀՕՄ-ի կրթաթոշակին արժանացել է Մարտունու քաղաքի բնակչուհի, Երեւանի պետական համալսարանի «Եվրոպական լեզուներ եւ հաղորդակցություն» ֆակուլտետի ուսանողուհի Անի Մկրտչյանը: 2022-2023 ուսումնական տարվա համար Կենտրոնական վարչության գնահատանքին է ներկայացվել երկու ուսանողների դիմումնագրեր՝ Արցախի Ասկերանի շրջանի Խնածախ գյուղից Պավել Ավագիմյանին եւ նույն շրջանի օկուպացված Ակնաղբյուր գյուղից Սոսե Մարգարյանին, ընդ որում երկու ուսանողներն էլ բարձր առաջադիմությամբ սովորում են Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական համալսարանում»:

ՀՕՄ-ը Արցախում իրականացնում է նաեւ «Ուսանող» ծրագիրը: ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության մտահղացումով 2020-2022 ուսումնական տարվա համար ծրագրի շահառուներն Արցախի բոլոր համալսարանների 105 ուսանողներ էին, ովքեր մասնակցել են Արցախի 44-օրյա պատերազմին: Արցախի պետական, «Մեսրոպ Մաշտոց» «Գրիգոր Նարեկացի», ինչպես նաեւ Շուշիի Տեխնոլոգիական համալսարանների որոշ ուսանողներ 100-ական ԱՄՆ դոլար դրամական պարգեւ են ստացել:

Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հետեւանքով Արցախում գործող ՀՕՄ-ի 8 «Սոսե» մանկապարտեզներից 4-ը՝ Մեծ Թաղերի, Շուշիի, Տողի եւ Քարեգահի մանկապարտեզները, գտնվում են թշնամու կողմից օկուպացված տարածքներում: Ներկայումս գործում են ՀՕՄ-ի 4՝ Ստեփանակերտի, Խնձրիստանի, Աշանի եւ Ակնաբերդի «Սոսե» մանկապարտեզները: «Պատերազմում կրած մեծ կորուստներով հանդերձ՝ «Սոսե» մանկապարտեզները շարունակում են գործել ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության եւ աշխարհասփյուռ հօմուհիների հոծ բանակի, ինչպես նաեւ իրենց աշխատանքին ու առաքելությանը նվիրված ընկերուհիների, աշխատակիցների շնորհիվ»,- ասում է ատենապետուհին:

ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհին հակիրճ խոսել է իրականացված այլ ծրագրերի մասին եւս: 2021 թվականի դեկտեմբերին ՀՕՄ-ի Կանադայի միավորի հանգանակած գումարով հակառակորդի անմիջական ազդեցության տակ գտնվող Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Շուշիի շրջանների 22 համայնքների 1190 երեխաներ ստացել են 20 ԱՄՆ դոլարին համարժեք ամանորյա նվերներ եւ 581 ընտանիք՝ 20-ական ԱՄՆ դոլար դրամական նվեր: Ծրագիրն իրականացվել է ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ համագործակցությամբ:

Արցախի 44-օրյա պատերազմից անմիջապես հետո «Նահատակված հերոսների զավակներ» ծրագրի շրջանակներում հավաքագրվել է Արցախից 662 երեխայի մասին տեղեկություն: 2021-2023թթ. ծրագրի շրջանակներում փոխանցվել է 411 երեխայի գումար:

2022 թվականի օգոստոսի 3-ին ԱՀ Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղի դպրոցականների համար ՀՕՄ-ի Արցախի միավորի վարչությունը դպրոցի տնօրինության հետ համատեղ 50 երեխայի համար կազմակերպել է մեկօրյա հանգստի ծրագիր:

→ 6

Միայն զենքով կա հայոց փրկություն

Հուլիս 27-ը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավորվեց որպես հայոց նորագույն պատմության եւ հայ դատի պահանջատիրական պայքարի մեջ գերագույն անձնազոհության եւ նվիրումի օր, որով սերունդներ են դաստիարակվում՝ ուխտելով պայքարել Հայաստանի ամբողջական ազատագրության համար:

40 տարի առաջ՝ 1983թ. հուլիսի 27-ին 5 հայ երիտասարդներ, ովքեր ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միության անդամներ էին, Պորտուգալիայի մայրաքաղաք Լիզսաբոնում գրավում են Թուրքական դեսպանատանը պատկանող համալիրն ու պայթեցնում շենքն ու իրենք իրենց: Այդ օրը արյունով գրված անջնջելի թվական դարձավ համայն հայության համար:

Այդ 5 ողջակիզներն էին Հայ Յեղափոխական Բանակի անդամներ՝ Վաչէ Տաղլյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահինյանը, Արա Քրջլյանը եւ Սարգիս Աբրահամյանը: Նրանց հերոսական գործողության նպատակը Հայոց ցեղասպանության եւ Հայոց դատի շուրջ ստեղծված՝ աշխարհի լռության պատը քանդելն էր, որը խորհրդանիշ դարձավ Հայ դատի զարթոնքին ու նոր էջ բացեց Հայոց ցեղասպանության ճանաչման եւ արդարության վերականգնման համար: Ողջակեզ տղաների անձնվիրական քայլը նորովի իմաստավորեց «իմացյալ մահն անմահություն է» գաղափարը:

Հայ Յեղափոխական Բանակի գործողությունների թիրախը բացառապես Թուրք պաշտոնյաներն էին: Այդ է պատճառը, որ Լիզբոնի գործողության մասնակիցները կրակ չեն բացում պորտուգալացի ոստիկանների վրա:

Տղաները երկար ժամանակ պատրաստվել են գործողությանը. մարզվել եւ քննարկել են բոլոր մանրամասները, սակայն նրանց ընկերներից եւ հարազատներից որեւէ մեկը տեղյակ չի եղել եւ անգամ չի նկատել որեւէ տարօրինակ հանգամանք: Գործողության մեկնելու նախօրեին բոլորը ստել եւ տարբեր պատճառներ են ներկայացրել տանից հեռանալու համար:

Գործողության մասնակիցներից ամենատարեցները՝ Սիմոնը եւ Սարգիսը, 21 տարեկան էին: Արան՝ 20, Վաչեն եւ Սեդրակը՝ 19:

Լիսաբոնում Թուրքիայի դեսպանատունը ակտի օրը անսպասելի ավելացրել էր դեսպանատան տարածքը հսկող ոստիկանների թիվը:

Դաշնակցական երիտասարդները Հայոց ցեղասպանության մասին վերստին խոսել հրահրելու համար հարձակվեցին Լիսաբոնի թուրքական դեսպանության շենքի վրա եւ գործողության ավարտին՝ հայտարարություն տարածելուց հետո, պայթեցրին իրենց: Հայտարարության մեջ ասվում էր.

«Իմացեք՝ մենք ինչ ենք անում: Ազատասեր հայ երիտասարդները որոշել են անգործ չսպասել: Մենք ամեն ինչ կորցրել ենք եւ այդ պատճառով որոշել ենք օդ բարձրացնել այդ շենքն ու մնալ դրա տակ: Սա ինքնասպանություն ու խելագարություն չէ, այլ բարձրագույն նվիրատվություն ազատագրական պայքարին: Թող միջազգային հանրությունը մեզ արկածախնդիր անվանի կամ ահաբեկիչ ու դահիճ, ոչինչ: Մենք որոշել ենք ուժի դիմել, որովհետեւ թրքական իշխանությունն ու այլ երկրներ, որոնք պաշտպանում են այդ իշխանությանը, ոտնահարում են հայ ժողովրդի իրավունքները: Հայ ժողովուրդը երկար է սպասել, որ միջազգային դատարանը գտնի հայկական հարցի լուծումը: Հայ ժողովրդի ինքնակողմնորոշման միակ ելքը զինված պայքարն է: Նախնիների ազատ եւ անկախ հայրենիքում ապրելն ու զարգանալը հայ ժողովրդի իրավունքն է»:

Ոստիկանների բացած կրակից առաջինը զոհվում է Սիմոն Յահինյանը, ով սիրում էր սրինգ նվագել եւ միշտ անբաժան էր իր սրինգից: Այդ օրը, սակայն, սրինգը նրա մոտ չէր:

Կայծակնային արագությամբ իրագործված ամբողջ գործողությունն այնքան ցնցող էր, որ բառի խորագույն իմաստով սահմռկեցին ոչ միայն աշխարհով մեկ ցրված պահանջատեր հայությունը, այլ նաեւ հայկական իրավունքի ու արդարության շուրջ ուրացման պատ քաշած ցեղասպան Թուրքիան եւ նրա հետ քայլ պահող ամոթալի լռության պատասխանատու մեծապետական ուժերը:

Թրքական պետությունն ու մեծապետական քաղաքականությունը, ցեղասպանության եւ անարդարության վրա իրենց խարսխած աշխարհակարգի հանգիստը վերահաստատելու խուճապով, տենդագին լծվեցին՝ իրենց իսկ բառերով՝ «Հայկական Ահաբեկչութեան նորահայտ վտանգը» խեղդելու աններելի արշավին... Մեծապետական աշխարհը ցնցվեց Լիսաբոնի պայթյունից, բայց չկարողացավ սթափվել մարդկային խղճմտանքի պարտադրված մահաքնից եւ անձնատուր դարձավ իրավունքի ու արդարության պայքարին պետական ահաբեկչությամբ պատասխանելու մոլորանքին:

Որոշակի ժամանակ պետք եղավ, որպեսզի Լիզբոն հինգի գերագույն զոհաբերությունը հայերին եւ ողջ աշխարհին հասկանալի դառնա իրենց իսկ խոստովանությամբ՝ նախքան գրոհը կատարված նրանց տեսագրության հետագա հրապարակումով.

- «Առանց հայրենիքի, առանց մայր հողին՝ ո՛չ ապագայ կայ, ո՛չ կեանք, ո՛չ ընտանիք կ'ըլլայ: Առանց մայր հողին, առանց ազգին, որեւէ ընտանիք գոյութիւն չունենար»,- հավատացած էր Արան:

- «Շատ հպարտ եմ, որ հայ ծնած եմ, որովհետեւ հայ պիտի մեռնիմ: Շատ ուրախ եմ այս գործողութեամբ: Հիմա մեր ապրած կեանքը իսկապէս որ կեանքէ զատ՝ ամէն ինչի կը նմանի: Կ'ապրինք ուրիշին տիրապետութեան տակ, ուրիշին խամաճիկներն ենք»,- ավելացրեց Սիմոնը:

- «Ինչպէս որ կ'ըսէ երգը (Սարդարապատի հերոսներուն նուիրուած երգը-Ն.), «Երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար»: Այո՛, մենք խենթեր ենք, բայց չակերտեալ խենթեր: Եկէ՛ք, միացէ՛ք մեզի: Կը հաւատամ, որ կը տիրանանք մեր հայրենիքին»,- հայտարարեց Սաքոն:

- «Ես բնական մահով պիտի չմեռնիմ. զոհը պիտի չըլլամ ճակատագրի խաղերուն: Ես Հայ Դատի զինուոր եմ. կեանքս պիտի զոհեմ այդ ճամբուն վրայ»,- ընդգծեց Վաչեն:

- «Մենք առաջինները չենք, որ կը քալենք, մեզմէ առաջ շատեր քալած են, եւ կը յուսամ, որ մեզմէ աւելի լաւերն ալ պիտի գան, մեզմէ աւելի գործեր պիտի ընեն»,- պատգամեց Սեդրակը:

Ահա այսպե՛ս Լիզբոն հինգի գերագույն զոհաբերության անմար ոգին վերանորոգեց հայ ժողովրդի ամբողջական ազատագրության պայքարի անսակարկ զինվորագրվելու հայոց նորահաս սերունդների մարտունակությունը, Հայ Դատի արդար լուծումը անկեղծ զինվորի անձնազոհությամբ նվաճելու՝ արյա՛մբ նվիրագործած գաղափարական հանդգնությունը:

Եվ իրավունքի ու արդարության ամբողջական վերականգնման անսակարկ պահանջատիրությամբ եւ հարատեւ կռվի ուղիով իր երթը շարունակող նորօրյա հայը, այսօր թե վաղը, երբ իր զավակների հայեցի շունչ ու գաղափարական թռիչք կներարկի, անպայման պիտի հիշի եւ միշտ պիտի հիշեցնի Լիզբոն հինգի՝ իբրեւ հավերժի մեջ հայոց արդար ցասումի արձագանգող պոռթկումը:

Լիզբոն հինգի հետ մեր էութեան կենսուրախ մեկ բջիջը ողջակիզվեց, որպեսզի իբրեւ ոգեշնչող անմար կրակ՝ յուրաքանչյուր հայի մեջ հառնի կամքն ու ուժը մինչեւ վերջին շունչ պայքարելու համակերպումի եւ պարտվողականության, հուսալքումի եւ անձնատվության ամեն կարգի փորձության դեմ:

«Ահա այսպե՞ս արշավեցին Լիզբոն զոհված քաջ ընկերներ»-ը:

Տղաները թաղված են միասին՝ Բեյրութում՝ Բուրջ Համուդի Ազգային գերեզմանատանը: Գերեզմանի հուշաքարին միացեսալ Հայաստանի քարտեզն է, որից վեր են խոյանում հինգ դաշյուններ:

Տղաների գերեզմանատունը ուխտատեղի է աշխարհի տարբեր ծայրերում բնակվող հազարավոր հայերի համար:

Նյութը պատրաստեց Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Արցախում ՀՕՄ-ի իրականացրած ծրագրերի մասին

5 ← «2023 թվականի փետրվարի 6-ին Սիրիայում տեղի ունեցած ահավոր երկրաշարժի հետեւանքով առաջացած մարտահրավերներին դիմակայող մեր հայրենակիցներին օժանդակելու համար՝ արձագանքելով ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության կոչին, ՀՕՄ-ի Արցախի միավորը ԱՀ Կառավարության հետ համագործակցությամբ կազմակերպել է դրամահավաք, որին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել պետական կառույցների աշխատակիցները, ՀՅԴ Արցախի կառույցը, ՀՕՄ-ի ընկերուհիները, աշխատակիցները, մանկապարտեզների սանիկների ծնողները, Արցախի տարբեր համայքների բնակիչներ»,- տեղեկացրել է Լ. Մարտիրոսյանը՝ ավելացնելով, որ Սիրիայի հայ համայնքը բարձր է գնահատել այս դժվարին վիճակում Արցախից իրենց հասած օժանդակությունը:

2022 թվականին /սեպտեմբեր-դեկտեմբեր/ ՀՕՄ-ի «Թիկունք կանգնենք արցախահայ ընտանիքին» ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվել Քաշաթաղի շրջանից 2022թ. օգոստոս ամսին հարկադրաբար տեղահանված Աղավնո գյուղի այն 6 ընտանիքներին (թվով 21 շունչ), ովքեր բնակություն են հաստատել Արցախի տարբեր բնակավայրերում: ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության, ՀՕՄ-ի Արցախի միավորի վարչության եւ ՀՅԴ Արցախի ԿԿ-ի որոշմամբ չորս ամիս շարունակ, ըստ ընտանիքների շնչերի, /յուրաքանչյուրին՝ 40.000 ՀՀ դրամ/ աջակցություն է տրամադրվել Աղավնո գյուղի մեր հայրենակիցներին:

2022 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության միջոցով ՀՕՄ-ի ԱՄՆ Արեւմտյան շրջանի շրջանային վարչության կողմից նվիրատվությամբ Արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորված եւ հաշմանդամության խումբ ստացած 52 վիրավորների տրամադրվել է 200-ական ԱՄՆ դոլար / 80.000 ՀՀ դրամ/ ֆինանսական աջակցություն: Ծրագիրն իրականացվել է ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի հարցերի նախարարության եւ Ստեփանակերտի Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնի հետ համագործակցությամբ:

Հետպատերազմյան շրջանում Արցախում իրականացված ամենամեծ ծրագրերից է .ՀՕՄ-ի «Արեւային Արցախ» ծրագիրը, որի նպատակն է ապահովել արցախահայության կյանքի բնականոն ընթացքը հայրենի հողի վրա: ՀՕՄ-ի «Արեւային Արցախ» ծրագրի շրջանակում 101 արեւային ջրատաքացուցիչներ տեղադրվեցին սոցիալապես խոցելի խավերի եւ Արցախի 44-օրյա պատերազմում նահատակ ունեցած ընտանիքների համար: Սարքավորումների որոշ դետալների ներմուծման դժվարությունների, տների տանիքների հետ կապված խնդիրների պատճառով որոշ առանձնատներում տեղադրման աշխատանքներն ավարտին չեն հասցվել: Արցախի ՀՅ Դաշնակցության Ստեփանակերտի «Արթուր Մկրտչյան» կոմիտեի նախաձեռնությամբ կազմավորվել է հանձնաժողով՝ ՀՅԴ կուսակցության ուղեկից կառույցների, այդ թվում՝ ՀՕՄ-ի վարչության անդամների հետ: Հանձնախումբը ապրիլի 7-ին Ստեփանակերտում կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված Մայրության եւ գեղեցկության, Սուրբ Աստվածածնի Ավետման տոն օրվան: Միջոցառմանը մասնակցում էին Արցախյան պատերազմներում նահատակված ՀՅԴ եւ ուղեկից կառույցների անդամների կանայք, մայրեր, ՀՅԴ Արցախի կառույցի ներկայացուցիչներ եւ ՀՕՄ-ի Արցախի միավորի անդամներ: Հանձնախմբի հաջորդ ձեռնարկը նվիրված էր Հայաստանի Առաջին Հանրապետության տոնին: Հայոց պետականության վերականգման՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 105 ամյակի առթիվ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ եւ ՀՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի վարչության աջակցությամբ Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում մայիսի 29-ին կազմակերպվել է տոնական միջոցառում, որտեղ երկու համարներով հանդես են եկել նաեւ ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի սաները: Ծրագրերը ֆինանսավորվել են ՀՕՄ-ի ԱՄՆ Արեւմտյան շրջանի Ծրջանային վարչության կողմից:

«1992 թվականին մուտք գործելով Արցախ, ՀՕՄ-ն իր հետեւողական, համառ աշխատանքով իրականացրել է բարեսիրական, հասարակական, ու մարդասիրական մի շարք ծրագրեր եւ նպաստել կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ու տնտեսական այլ ոլորտների զարգացմանը: ՀՕՄ-ն իր կամավոր անդամուհիներով 44-օրյա պատերազմի օրերին եւ դրան հաջորդած տարիներին անգնահատելի ծառայություններ է մատուցել հայրենիքին. թիկունք կանգնել մեր հայրենակիցներին, սատարել զոհված ազատամարտիկների ընտանիքներին, վիրավորներին, տեղահանվածներին, սահմանում կանգնած հայ զինվորին եւ առ այսօր էլ աջակցում է արցախցուն՝ թշնամու կողմից շրջափակման հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամի հաղթահարման գործում: Վստահ ենք, որ Հայ Օգնության Միությունը հավատով եւ նվիրումով կշարունակի իր առաքելությունը՝ հավատարիմ մնալով ՀՕՄ-ի կարգախոսին՝ «Ժողովրդիս հետ, ժողովրդիս համար»,- հավելել է ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհին:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արցախից լավ տեղ չկա մեր ժողովրդի համար. Ռ. Առստամյան

Ադրբեջանական կողմի վարած քաղաքականությունը ի վերջո հետապնդում է Արցախի վերջնական հայաթափում: Դրան հասնելու համար թշնամական կողմը գործադրում է ամենատարբեր միջոցներ: 2022թ. դեկտեմբերի 12-ից սկսված շրջափակումը լրջագույն խնդիրներ է ստեղծել Արցախի համար՝ կապված սննդի, էներգիայի աղբյուրների, ջրի հետ, իսկ սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ թշնամու զինուժը պարբերաբար կրակոցներ է արձակում՝ փորձելով ճնշել, վախեցնել գյուղացիներին:

Մարտակերտի շրջանի Կիչան գյուղից ադրբեջանական դիրքերի հեռավորությունը օդային գծով ընդամենը 2 կիլոմետր է: Գյուղը դիտարկվում է թշնամու 2 դիրքերից, որտեղից թեեւ գյուղի ուղղությամբ հաճախակի չեն կրակում, սակայն կրակոցներ լինում են հիմնականում դիրքերի ուղղությամբ: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Կիչան համայնքի ղեկավար Արտո Հակոբյանը:

Նրա խոսքով՝ չափազանցված են լուրերը, թե հունիսի 27-ի լույս 28-ի գիշերը գյուղը տարհանվել է, եւ կրակոցները եղել են Կիչանի ուղղությամբ:

«Թշնամին կրակում էր դիրքերի ուղղությամբ, իսկ լուսաբացին մոտ արդեն սկսեց կիրառել նաեւ խոշոր տրամաչափի զինատեսակներ: Դրանից հետո խուճապ է տարածվել, որ Կիչանի վրա են կրակել, գյուղը տարհանվել է, սակայն գյուղացիները իրենց տներից չեն հեռացել: Կրակոցների արդյունքում պայթեցրել են էլեկտրականության գծերը. ցավոք սրտի, դիրքերում նաեւ զոհեր ենք ունեցել»,- ասել է համայնքի ղեկավարը:

Ըստ Ա. Հակոբյանի՝ գյուղացիները, բոլոր դժվարություններին հակառակ, շարունակում են հողին կառչած ապրել ու արարել: Պատերազմից հետո բոլորը վերադարձել են գյուղ: 44-օրյա պատերազմում 2 զոհ է ունեցել գյուղը:

«Մարդիկ կոտրված չեն, խուճապի մեջ չեն: Գյուղացիների հիմնական զբաղմունքը հողագործությունն է, սակայն թշնամին խոչընդոտներ է ստեղծում նաեւ այստեղ: Մինչ պատերազմը գյուղացիներն ավելի շատ էին հողագործությամբ, այգեգործությամբ ու անասնապահությամբ զբաղվում, սակայն այսօր գյուղացիները զրկված են այդ իրավունքից: Այս տարի սահմանափակ քանակությամբ են մշակվել ցորենի եւ գարու արտերը: Կարմիր խաչի կողմից տեղադրվել է 17 ջերմոց, որոնք բոլորն էլ օգտագործվում են տարբեր մշակաբույսերի աճեցման նպատակով: Մարդիկ հասկացել են, որ Երեւանից էլ չեն կարողանա բանջարեղեն բերել, սկսել են ինքնուրույն մշակել»,- նշել է Ա. Հակոբյանը:

Համայնքի ղեկավարը մտահոգիչ է համարել անասնապահության վիճակը: Խոշոր անասունների գլխաքանակը նվազել է՝ կապված կերի եւ արոտավայրերի բացակայության հետ:

«Անասուններն անցնում են թշնամու վերահսկողության տակ գտնվող տարածք ու այլեւս հետ վերադարձնել չենք կարողանում: Վերջերս իմ անասուններն էին անցել: Ռուսների հետ պայմանավորվել էինք, որ խնդիր չի լինի, ու ասացին, որ կարող եմ գնալ ու բերել: Սակայն հենց գնացի՝ սկսեցին ինձ վրա կրակել: Ձեռքիս հեռախոսի միջոցով կարողացա կապվել նրանց հետ, եւ ռուսներն ասեցին՝ մի քիչ սպասեմ, իսկ քիչ անց տեղեկացրին, որ ադրբեջանական կողմը թույլ չի տալիս առաջ գնալ, ինչոր ձեւով դուրս գամ դաշտից եւ վերադառնամ: Բարեբախտաբար, հետո կովերը ինքնուրույն հետ վերադարձան»,- մանրամասնել է համայնքի ղեկավարը:

Ներկայումս գյուղը ջրի խնդիր չունի տեղացած առատ անձրեւների պատճառով, սակայն, ըստ համայնքի ղեկավարի, այն ի հայտ է գալիս հատկապես երաշտային ժամանակաշրջանում՝ օգոստոսին: Նման դեպքերում մի քանի ժամով են ջուր բաց թողնում, իսկ գյուղացիներն այն պահեստավորում են եւ դրանով ոռոգում իրենց այգիները:

Գյուղատնտեսական աշխատանքների համար լրջագույն խնդիր է ստեղծում նաեւ վառելիքի բացակայությունը, իսկ գյուղատնտեսական տեխնիկան մինչեւ վերջին դեպքերը ապահովում էին հարեւան գյուղերից, սակայն այժմ, իմանալով թե որտեղ պետք է կատարվեն այդ աշխատանքները, շատերը հրաժարվում են:

Գյուղում տեղահանված մեկ ընտանիք կա: Գործում է գյուղապետարան, ակումբ, դպրոց: Բուժկետը պետք է կառուցեին, որի համար շինանյութն արդեն բերվել էր, սակայն, համայնքի ղեկավարի խոսքով, այդպես էլ չհասցրին այն կառուցել:

Կիչանում տեղադրվել է 6 արեւային ջրատաքացուցիչ. 2-ը՝ զոհվածների ընտանիքների համար, իսկ մյուս 4-ը՝ գյուղացիներն են սեփական նախաձեռնությամբ տեղադրել, որի գնի կեսը սուբսիդավորել է պետությունը:

«Իրեն արդարացնում է: Երբ հոսանք չկա, մշտական տաք ջուր ունենք»,- նշել է Ա. Հակոբյանը:

Նրա խոսքով՝ գյուղի մնացած հարցերը իրենց լուծումը կարող են ստանալ, եթե նախ եւ առաջ կարողանանք լուծել անվտանգության հարցերը, որպեսզի մարդիկ կարողանան սեփական աշխատանքով վաստակել իրենց եկամուտը:

Կիչան գյուղին հարակից է Նոր Ղազանչի գյուղը: Այն եւս սահմանամերձ է եւ ունի այն բոլոր խնդիրները, ինչ ունեն Կիչանն ու մնացած այլ սահմանամերձ գյուղերը: Նոր Ղազանչի համայնքի ղեկավար Ռուսլան Առուստամյանի խոսքով՝ գյուղացին պետք է զբաղվի գյուղատնտեսությամբ, սակայն այսօր հողագործությամբ ու անասնապահությամբ զբաղվելու համար համապատասխան պայմաններ չկան: Բնակչության մի մասն զբաղվում է խոզաբուծությամբ, մնացածն էլ ուժային կառույցներում են աշխատում:

Նրա խոսքով՝ մինչ պատերազմը գյուղն ուներ 101հա վարելահող, որից 13հա-ն մնացել է թշնամու տիրապետության տակ, իսկ մեր վերահսկողության տակ մնացած հատվածներում էլ թշնամին թույլ չի տալիս իրականացնել համապատասխան գյուղատնտեսական աշխատանքներ:

«2021թ. կատարել ենք 65 հա աշնանացան, իսկ դրանից հետո այլեւս ադրբեջանական կողմը թույլ չի տվել մշակել այդ հողերը: Այս տարի կարողացել ենք մշակել 4 հա գարի, 4 հա հաճար եւ 5 հա կարտոֆիլ»,- մանրամասնել է համայնքապետը:

Գյուղում 14 ընտանիքի Կարմիր խաչի կողմից տրամադրվել են ջերմոցներ:

«Մնացած գրեթե բոլոր ընտանիքները եւս ցանկություն են հայտնել ջերմոցներ ձեռք բերել: 7-8 ընտանիքներ ցանկություն են հայտնել ձեռք բերել նաեւ արեւային ջրային տաքացուցիչներ»,- նշել է Ռ. Առուստամյանը:

Գյուղում չկա բուժկետ, չկա մանկապարտեզ, իսկ դպրոցը Նոր Ղազանչի եւ Կիչան համայնքները միասին են օգտագործում: Ըստ համայնքապետի՝ ճանապարհները 7-8 ամիս առաջ բարեկարգվել էին, սակայն հորդառատ անձրեւները դրանք նորից քանդել են:

Շրջափակման ընթացքում գյուղ հասնում էր կտրոնների նախատեսված սնունդ, սակայն վերջին՝ լիակատար շրջափակումից հետո սննդի եւ վառելիքի բացակայության խնդիրն իրեն զգացնել է տալիս ինչպես Նոր Ղազանչիում, այնպես էլ Արցախի բոլոր բնակավայրերում:

Պատասխանելով ապագայի վերաբերյալ ունեցած տեսլականի մասին հարցին, Ռ. Առուստամյանը պատասխանեց, որ Արցախի 100 տոկոսն էլ կցանկանար, որպեսզի լուծվեին անվտանգային խնդիրները եւ մարդիկ վերադառնային իրենց մինչպատերազմական կյանքին:

«Արցախից լավ տեղ չկա մեր ժողովրդի համար»,- եզրափակել է համայնքի ղեկավարը:

Ծիրխանում Հայրապետյանը՝ շուրջ 30 տարի է, ինչ ապրում է Նոր Ղազանչիում: Այստեղ հաստատվել է Ղազանչի գյուղից: Պատերազմից հետո բոլորը վերադարձել են գյուղ եւ շարունակում են ապրել, սակայն թշնամու կրակոցները միշտ թարմ են պահում պատերազմի մասին հիշողությունները: Նրա խոսքով՝ հունիսի 27-ի կրակոցները նորից գյուղացիներին հիշեցրին սեպտեմբերի 27-ի առավոտը:

«Առաջներում էլի եղել են կրակոցներ, սակայն ոչ գյուղի ուղղությամբ: Հունիսի 27-ի դեպքերը մեզ նորից հիշեցրին սեպտեմբերի 27-ի առավոտը: Շատ մեծ տրամաչափի զենքերով են կրակել»,-պատմել է նա:

Տիկին Ծիրխանումի խոսքով՝ 1988-ից առ այսօր շարունակվում է հայերի ցեղասպանությունը:

«Ինչպե՞ս ապրենք նրանց հետ: Նույնիսկ խորհրդային ժամանակներում նրանք իրենց անմարդկային են դրսեւորել: Հիմա ինչպե՞ս այսքան զոհերից հետո ասենք՝ նրանց հետ ապրում ենք: Հնարավոր բան չէ»,- վստահորեն ասել է տիկին Ծիրխանումը:

Նրա թոռնիկը եւս ՊԲ շարքերում է ծառայում:

«Մինչեւ թոռնիկս վերադառնում է դիրքերից, կես մարդ եմ դառնում: Ասում է բաբո, մի վախեցիր, բոլորին կսպանենք ու հետ կբերենք ամեն ինչ: Երիտասարդները պնդում են, որ ամեն գնով պետք է պաշտպանենք այս հողը, բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով, անհասկանալի է: Այդքան գումարներ են ծախսում, օգնություններ են բաժանում, դրա փոխարեն մի զենք էլ չեն գնել, որ հարձակման դեպքում գոնե պաշտպանվենք: Հայ ժողովուրդն անտեր է մնացել»,- ասել է տիկին Ծիրխանումը:

Տիկին Ծիրխանումը այսօր միայնակ է մնացել գյուղում: Ամուսինը չկա, իսկ տղան ու հարսը՝ 8 ամիս է, ինչ չեն կարողանում Երեւանից վերադառնալ. բուժման նպատակով էին մեկնել: Ուստի այսօր միայնակ է փորձում դիմակայել շրջափակման հարուցած դժվարություններին: Թեեւ խնդիրները շատ են, սակայն տիկին Ծիրխանումը միայն իր մասին չէ, որ մտածում է:

«Մեկ անգամ են թոշակառուներին օգնություն տվել, սակայն դա էլ չենք ուզում, միայն թե խաղաղություն լինի: Գյուղում հնարավոր է սնունդ գտնել, բա քաղաքում ի՞նչ անեն: Բերում են գունավոր կտրոններ տալիս, բայց ապրանք չկա, եղածի դեպքում էլ՝ ով գումար ունի՝ միանգամից գնում է, ով էլ չունի՝ մնում է առանց ապրանքի: Դա էլ մի կողմ, միայն թե կռիվ չլինի»,- եզրափակել է նա:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՄԸՄ համաարցախյան երկրորդ բանակումը

Հուլիսի 23-28-ը Ստեփանակերտի «Կարկառ» ճամբարի տարածքում կայացել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) համաարցախյան երկրորդ բանակումը: Համաարցախյան առաջին բանակումը կազմակերպվել է մասնաճյուղի բացման տարվա ընթացքում՝ 2019թ.: Դրանից հետո կորոնավիրուսի, պատերազմի պատճառով աշխատանքները հետաձգվել են:

ՀՄԸՄ Արցախի մասնաճյուղի ատենապետ Դավիթ Գրիգորյանի խոսքով՝ այս պայմաններում բանակումի կազմակերպումը մեծ մարտահրավեր է, սակայն առողջ դաստիարակությունը, կրթությունը չպետք է տուժեն՝ անկախ պայմաններից: «Նախքան բանակումը՝ 25 հոգանոց խմբապետական կազմին պատրաստելու աշխատանքներ են ընթացել: Բանակումին Ստեփանակերտի դպրոցներից 4-ական տղա ու աղջիկ ենք ընդգրկել, նախատեսում էինք 96 հոգի նորագիր ու խմբապետական կազմ, բայց առաջին օրը 125 հոգի մասնակիցներ կային: Երկու օր հետո մոտ 40-ը լքեցին ճամբարը՝ դժվար պայմանների, հարազատների կարոտի պատճառով. այժմ 100 մասնակից կա»,- ասում է նա:

«ՀՄԸՄ-ի նպատակը միտքն ու մարմինը մարզելն է: Մեր ճամբարները շենքերում չեն լինում, կազմակերպվում են վրանային պայմաններում, բնության գրկում»,-նշում է ճամբարի պետ Անդրանիկ Չավուշյանը: «Խանգարող հանգամանքներ կային, բայց կարողացանք դրանք հաղթահարել: Ժամանակի սղության ու տեղատարափ անձրեւների պատճառով որոշ նախատեսված ծրագրեր չկարողացանք իրագործել: Տարբեր դպրոցների աշակերտների տարբեր խմբերում ընդգրկեցինք, կարողացանք համախմբել, ծանոթացնել իրար հետ»,- հավելում է ճամբարի պետը:

Բանակումին ֆինանսապես աջակցել է ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, ծախսերի մի մասն էլ հոգացել է ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչությունը: Բանակումի սկիզբն ազդարարվում էր առավոտյան ժամը 7:00-ին, այնուհետեւ նախավարժանք, վրանների ստուգում, մաքրում, դասախոսություններ, մարզական մրցույթներ, ժամանցային խաղեր: Նպատակը պատանիներին գործնականում սկաուտական աշխատանքներին ծանոթացնելն է, սկաուտական նոր խմբեր պատրաստելը եւ բնությանն ավելի մոտ դարձնելը: Ինչպես նշում են կազմակերպիչները՝ ամենամեծ խնդիրը սննդի հետ էր կապված, որի պատճառով ստիպված մի շաբաթ հետաձգել են ծրագիրը՝ տեղական բանջարեղենի սեզոնին հասնելու համար: Նաեւ բանակավայրն են Ստեփանակերտից մոտիկ վայր ընտրել, որպեսզի հնարավոր լինի սնունդ հասցնել եւ հիվանդանոցին մոտ լինեն:

Բանակումին մասնակցում էին 11-12 տարեկան պատանիներ: Նրանք նշում են, որ այս օրերի ընթացքում ավելի կարգապահ, կազմակերպված են դարձել, ավելի լավ են սկսել ճանաչել բնությունը, ու բանակումը կմնա՝ որպես լուսավոր դրվագ:

Բանակումի փակման արարողության ժամանակ մասնակիցները հանդես են եկել սպորտային, գեղարվեստական ելույթներով, ակտիվություն ցուցաբերած սկաուտները պարգեւատրվել են պատվոգրերով ու շնորհակալագրերով, իսկ երեկոն եզրափակվել է խարույկի շուրջ հաճելի ժամանցով:

Տաթեւիկ ՍՂԱՋԱՆՅԱՆ

ՀՅԴ պատանեկան ճամբար Մարտունիում

Տարիներ ի վեր Արցախի պատանիների ամառային հանգստի անբաժան մասն են կազմում ՀՅ Դաշնակցության երիտասարդական միությունների կողմից կազմակերպվող բակային ճամբարները: Ամեն տարի աշխարհի տարբեր երկրներից դաշնակցական երիտասարդներ էին ժամանում Արցախ՝ իրենց հետ աշխուժություն բերելով Արցախ: Նախորդ տարվանից սկսած՝ շրջափակումն այս տարի անհնար դարձրեց այդ երիտասարդների մուտքն Արցախ, սակայն դա խոչընդոտ չհանդիսացավ, որպեսզի ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը շարունակի ՀՅԴ պատանեկան ճամբարների ծրագիրը:

Մարտունի քաղաքում հուլիսի 17-ին մեկնարկել էր ՀՅԴ Արցախի երիտասարդական միության կողմից կազմակերպված պատանեկան բակային ճամբարը: 12 -16 տարեկան պատանիների համար նախատեսված ճամբարը հովանավորվել է ՀՅԴ Արեւմտյան շրջանի երիտասարդական միությունը:

Ըստ ՀՅԴ ԱԵՄ-ի Կենտրոնական վարչության անդամ Վահագն Խաչատրյանի՝ պատանիների առօրյան շատ հագեցած է անցնում:

«Պատանիներին սովորեցնում ենք ազգային երգ ու պար, կարդում ենք դասախոսություններ՝ նրանց մեջ սերմանելով ազգային արժեքներ եւ սեր առ հայրենիք ու ժողովուրդ»,- ասել է նա:

Վ. Խաչատրյանի խոսքով՝ այս պայմաններում բավականին դժվարություններ են ի հայտ եկել ճամբարի կազմակերպման ընթացքում:

«Ճամբարը պլանավորված էր նախքան Արցախի լիակատար շրջափակումը: Այդ շրջափակումն էլ ավելի սրեց առկա իրավիճակը եւ բազմաթիվ խնդիրների առաջ կանգնեցրեց մեզ: Դժվարությունները, սակայն, պատճառ չհանդիսացան, որ մենք հետ կանգնենք մեր առջեւ դրված խնդրից: Մենք մեր առջեւ նպատակ էինք դրել այս պայմաններում պատանիների համար ապահովել աշխույժ ու ուրախ առօրյա՝ հագեցած նոր գիտելիքներով, ժամանցային, մշակութային ու սպորտային ծրագրերով, ցրել նրանց բացասական մտքերն ու մտածումները»,- ասել է Վ. Խաչատրյանը:

Ճամբարը ՀՅԴ երիտասարդականի համար ավանդական է: Դրանք կազմակերպվում էին ե՛ւ մինչեւ պատերազմը, ե՛ւ պատերազմից հետո: Ըստ Վ. Խաչատրյանի՝ պատերազմից հետո կազմակերպվել են շուրջ 12 ճամբարներ՝ Արցախի տարբեր համայնքներում, որին մասնակցելու հնարավորություն են ունեցել շուրջ 1500 պատանիներ:

«Մենք այս ծանր ժամանակաշրջանում պարտավոր էինք ավելացնել աշխարհի տարբեր երկրներից ՀՅԴ երիտասարդական միությունների հետ համատեղ կազմակերպվող ճամբարների քանակը, որպեսզի հետպատերազմյան ծանր մթնոլորտը կարողանայինք ցրել ու չզրկել պատանիներին իրենց գունավոր մանկությունից: Ցավոք սրտի, այս տարի Սփյուռքից մեր ընկերները չկարողացան ժամանել»,- նշել է Վ. Խաչատրյանը:

Ճամբարի նկատմամբ բավականին ուշադիր են հատկապես Մարտունու շրջանի ՏԻՄ մարմինները՝ ի դեմս Մարտունու քաղաքապետ Ազնավուր Սաղյանի:

«Հիմնական խնդիրներից մեկը Մարտունիում ջրի սակավության հարցն էր, սակայն Մարտունու քաղաքապետի եւ տեղական իշխանությունների աջակցությամբ այս հարցը լուծվեց: Սննդի հետ կապված հարցերը եւս նրանց շնորհիվ լուծվեցին, եւ կարողացանք հնարավորինս պատանիներին ապահովել նաեւ ուտելիքով: Ճամբարի մասին տեղեկացել է նաեւ ԱՀ ՆԳՆ ոստիկանությունը, ԱՀ ՆԳՆ ԱԻՊ ծառայությունը, ովքեր այցելել եւ ծանոթացել են ընթացող աշխատանքներին, իսկ բուժքրոջ կողմից իրականացվում է մշտական հերթապահություն»,- ասել է նա:

Ճամբարը մեկնարկում է առավոտյան ժամը 08:00-ին եւ ավարտվում 14:00-ին: Ըստ Վ. Խաչատրյանի՝ ճամբարը սպասվածից ավելի հետաքրքիր ու արդյունավետ է:

«Երեխաների կողմից սպասված են ճամբարները: Նրանք էլ ակտիվ մասնակցում են ու մեծ աշխուժություն են ցուցաբերում: Այդ աշխուժությունը բավականին ոգեւորիչ է պատասխանատու կազմի համար: Մարտունու պատանիները հատկապես աչքի են ընկնում իրենց կարգապահությամբ ու պատասխանատվությամբ: Վստահ եմ, որ գալիք օրերն էլ ավելի հետաքրքիր են լինելու», - եզրափակել է Վ. Խաչատրյանը:

Վ. Խաչատրյանը նշեց նաեւ, որ ճամբարի ընթացքում ճամբարականների հետ համացանցով կապ են հաստատել աշխարհի տարբեր երկրներից դաշնակցական երիտասարդներ եւ պատանիներ:

«Նպատակն էր՝ կոտրել պատանիների ինքնամեկուսացումը: Նրանք ջերմ ու ընկերական հարաբերություններ են ձեւավորվել հատկապես Ավստրալիայի հայ պատանիների հետ: Նրանք ծանոթացել են, զրուցել ու միմյանց ուղղել հետաքրքրող հարցեր: Ճամբարականները ավստրալահայ պատանիներին են ներկայացրել իրենց սովորած կանչերն ու երգերը: Մեր գլխավոր նպատակն այն է, որ պատանիները ճանաչեն միմյանց, նոր գիտելիքներ ստանան, գնահատեն ազգային արժեքներն ու Դաշնակցության դերը»,- ասել է Վ. Խաչատրյանը:

Ճամբարի ընթացքում կազմակերպվել են Ճանաչողական արշավներ, ֆուտբոլի, ինտելեկտուալ խաղի, կրակային պատրաստության, երգ ու պարի եւ այլ սպորտային ու հետաքրքիր խաղային մրցույթներ:

ՀՅԴ պատանեկան ճամբարի փակման արարողությունը տեղի է ունեցել հուլիսի 28-ին: Այն նվիրված էր Լիզբոն 5-ի գործողության 40-ամյակին:

Միջոցառման ընթացքում պատանիները իրենց ծնողներին եւ հյուրերին ներկայացրել են երկու շաբաթների ընթացքում իրենց սովորածը: Հնչել են Լիզբոն 5-ի տղաների խոսքերից, նրանց նվիրված բանաստեղծություններից ու երգերից, իսկ ծրագրի 2-րդ մասը նվիրված էր Հայաստանին ու Արցախին: Պատանիները ներկայացրել են Արցախի ու Հայաստանի մասին երգեր, բանաստեղծություններ, պարել ազգային պարեր:

Միջոցառումը պատանիներն ավարտել են իրենց մայր հողում խաղաղ ապրելու մանկական երազանքի մասին բարձրաձայնելով ու Արցախը ամուր պահելու նրանց հավատը վերահաստատելով: Միջոցառման ավարտին ելույթ են ունեցել ՀՅԴ Մարտունու կոմիտեության անդամ, հայրենադարձ Շանթ Չարշաֆճյանը եւ ՀՅԴ Արցախի Երիտասարդական միության Կենտրոնական վարչության անդամ Վահագն Խաչատրյանը, որից հետո հայտարարվել են ճամբարի հաղթող թիմն ու ամենաակտիվ մասնակիցները, որոնց հանձնվել են պատվոգրեր ու նվերներ:

Շանթ Չարշաֆճյանը նշեց, որ ՀՅԴ կուսակցության մեջ սովորություն չկա իրար շնորհակալություն հայտնելու, ուստի կազմակերպիչներին ասաց. «Ձեր վարձքը կատար, հաճախակի եկեք Մարտունի եւ նմանատիպ ծրագրեր կյանքի կոչեք: Կուզեի շնորհակալություն հայտնել ծնողներին: 2,5 տարի է, ինչ ապրում եմ Մարտունիում, հասցրել եմ ծանոթանալ բոլորին, եւ տեսել եմ, թե ինչպիսի լավ դաստիարակություն ունեն ձեր երեխաները: Այս 2 շաբաթների ընթացքում էլ ավելի համոզվեցի դրանում, տեսա, թե ինչպիսի տաղանդավոր երեխաներ կան, երբ երգում, պարում ու ասմունքում էին»:

ՀՅԴ ԱԵՄ-ի ԿՎ անդամ Վահագն Խաչատրյանն էլ իր խոսքում շնորհակալություն հայտնեց Մարտունու քաղաքապետարանին, ԱՀ ՆԳՆ ԱԻՊԾ եւ ոստիկանության Մարտունու շրջբաժիններին ճամբարի կազմակերպմանն օժանդակելու համար:

«Շնորհակալություն ենք հայտնում հատկապես ծնողներին, որ այս անորոշ օրերին իրենց զավակներին վստահեցին մեզ: Այս երկու շաբաթների ընթացքում պատանիների հետ միասին մենք կարողացանք սովորել ազգային երգեր ու պարեր, ունենալ դասախոսություններ, արշավներ եւ այլն: Հուսով ենք՝ մեր այս փոքրիկ քայլով կարողացանք որոշակի չափով ուրախություն բերել պատանիների առօրյան: Այս դժվարին պայմաններում սա այն նվազագույնն էր, որ կարողացանք անել նրանց համար»,- ասել է Վ. Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ այս երկու շաբաթների ընթացքում այնքան են մտերմացել վարիչները ճամբարի մասնակիցների հետ, որ շատ դժվար է նրանցից բաժանվելը:

Ճամբարի կազմակերպիչները հրաժեշտ են տվել ճամբարականներին՝ նորից վերադառնալու խոստումով: Վ. Խաչատրյանը մեզ հետ զրույցում նշեց, որ այս ճամբարը դրական առումով առանձնանում էր նախորդ տարիներին կազմակերպված բոլոր ճամբարներից:

«Համեստություն չեմ անի, եթե նշեմ, որ այս տարվա ճամբարը վերջին տարիների լավագույն ճամբարներից մեկն էր, հաշվի առնելով թե՛ պատանիների կարգապահությունը, թե՛ ցուցաբերած ակտիվությունը: Իհարկե, զգալի էր շրջափակման բացասական ազդեցությունը նրանց հոգեւիճակի եւ տրամադրության վրա: Նախկինի պես չկային պատանիներին բնորոշ չարաճճիությունը, անհնազանդությունը: Մենք մեր աշխատանքում փորձում էինք նրանց հնարավորինս ակտիվ պահել, ուրախ պահել: Մեզ մոտենում էին պատանիները, ու խոստովանում, թե ինչպես է նրանց բառապաշարից անհետացել վատ բառերը: Մենք հենց սկզբից ժարգոնային բառեր օգտագործողներին թեթեւ պատիժ էինք տալիս, այնուհետեւ նկատեցինք, որ պատանիները սկսել են միմիանց օգտագործած վատ բառերը նկատել ու ինքնուրույն պատժել դիմացինին: Բավականին մեծ արձագանք ենք ստացել նաեւ ծնողներից, ովքեր նույնպես անհատապես մոտենում ու շնորհակալություն էին հայտնում մեզ ու ասում, որ անհավատալի էր նրանց համար, որ իրենց երեխաները կարող էին այդքան փոխվել դեպի լավը»,- ասել է ԿՎ անդամը:

Վ. Խաչատրյանը ընդգծեց նաեւ այն փաստը, որ երեխաների մոտ կարողացել են ձեւավորել թիմային մտածելակերպն ու ստեղծել նոր մեծ ընկերություն.

«Վերջին օրը պատանիները խոստովանեցին, որ իրենց թիմերում կային մարդիկ, ովքեր միմիանց հետ լավ հարաբերություններ չունեին, կամ չէին շփվում միմյանց հետ, սակայն ճամբարի արդյունքում ընկերացել են եւ դարձել մի մեծ ընտանիք: Մենք նրանց սովորեցնում էինք միմյանց հետ խոսել ընկերով, ինչպես խոսում են վարիչների հետ: Պատանիներից մեկը վերջին օրն ասաց, որ այնքան է փոխվել իր բառապաշարը, որ անգամ աղոթելիս Աստծուն սկսել է ընկեր Աստվածով դիմել: Այս ամենը ոգեւորիչ ու պարտավորեցնող է մեզ համար՝ շարունակել նրանց հետ աշխատանքը, որովհետեւ մեր պատանիներն աշխարհի ամենախելացի ու կարգապահ պատանիներն են, ովքեր արժանի են ուրախ մանկության ու պայծառ ապագայի»,-եզրափակել է Վ. Խաչատրյանը:

«Ապառաժ»

Սիրելի ընթերցողներ,
Ամառային արձակուրդի պատճառով «Ապառաժ»-ի հաջորդ համարը լույս կտեսնի 2023թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակում:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան